№ 69 ՈՒՐԲԱԹ, 29 ՄԱՐՏԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 29 ՄԱՐՏԻ № 69

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆօն № 2—58.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվումէ ամեն լիզվով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՊԱՊԻՐՈՍՆԵՐ ԳԱԼԼԻԱ „ԿՈՄԷՏԱ“ ԸՆԿ.

— ԹԻՖԼԻՍՈՒՄ: —

25 հատը—15 կոպ., 10 հատը—6 կոպ. (և. ու.) 986. 0—26

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Ցայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Кº, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 Թ-ի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 Թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը» և 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կիրակի, մարտի 31-ին,

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿԱՐԱ-ՄՈՒՐՋԱՅԻ

մահվան տասնմէկամեակի առիթով, Կուկիայի կաթոլիկաց գերեզմանատան մատուռում կը մատուցվի պատարագ և կը կատարվի հոգեհանգիստ Թէ հանգուցեալի և Թէ նրա մօր յիշատակին։ Պատարագից յետոյ կը բացվի Ք. Կարա-Մուրզայի գերեզմանի վրա կանգնեցված մահարձանը։ Պատարագի սկիզբը առ. ժ. 11-ին։

241. 2—1

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, ապրիլի 1-ին
ՀԱՅ ԲԵՄԻ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ
Բարեհաճ մասնակցութեամբ տեղիս սիրողների
կը ներկայացնեն
Առաջին անգամ Թիֆլիսում
ԾԻԼԵՐ
Դրամա 3 գործ. և 4 պատկերով, հեղ. Յով. Մալխասեանի
Մասնակցում են.—տ. տ. Թարխանեան, Խիթարեան, Մարգարիտ, Ցամիկ, Սաթենիկ, պ. պ. Աբովեան, Գալստեան, Ղազարեան, Ղուշչեան, Ճօնեան, Մարկոսեան, Մատինեան, Ցարութիւնեան II, Ռուսեան, Սերժ, Ստեփանեան, Փիրումեան, Օհանեան և ուրիշները։
Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8½-ին։
Տեղերի գները՝ ԼՕԺԱՆԵՐԸ—լիտէրնի—7 և 8 րուբլի, բենուար—5 րուբլի, բելէտաժ—3 և 4 րուբլի, պարտեր—2 րուբլուց մինչև 70 կոպ., գալլերէյ—40, 30 և 20 կոպէկ։
Րէժիսեօր՝ օր. ԽԻԹԱՐԵԱՆ
Պատասխանատու կարգադրիչ՝ ՅՈՎ. ՄԱԼԽԱՍԵԱՆ
տա. 245. 2—1

Կ. Հ. Բ. Ը. դահլիճ
Աբաս-Աբադեան հրապ. № 7.
Այսօր, մարտի 29-ին
կը կայանայ
ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ
ԵՐԵԿՈՅԹ
I
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂԲԱԼԵԱՆԸ
կը դասախօսէ հայերէն լեզուով՝ Բանաստեղծութեան նշանակութիւնը նիւթի մասին։
II
ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Մասնակցում են՝ օր. օր. Աբովեան, Դարբինեան, Մալխասեան, Մ. և Ր. Մինասբէկեանները, Միլիօնչեան, դերասանուհի տիկ. Լուսիկա, պ. պ. Աղայեան, Վարդիկեան, Վրոյր, Սարգարեան, Մինասեան և ուրիշ.
III
ԱՊՕԹԷՕԶ
կենդանի պատկեր ԳԱԲ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ
IV
ՊԱՐԵՐ
Տեղերի գները 1 ր. 50 կ.—50 կ., աշակ. 30 կ.։ Տոմսակները վաճառվում են Ընկերութեան շէնութեան մէջ, առ. ժ. 10—2-ը, երեկ. 4—10-ը։
Կարգադրիչ՝ Ա. Գուլօյեան
տա. 242. 1—1

Երդ.-հաւատարմատար
ԱՂԷՔ. ՊԱՊՈՎԵԱՆԸ
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ Вознесенская 9, տուն Ղալամքարեանի։
տա. 238. 5—5

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻԻ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԷՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանօվսկայա)։ Հեռախօս 7—92.
(ա.օ.) տա. 92. 100—41

ՆՈՐ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Քաղաքական հորիզօնը նորից սկըսում է մթագնվել։ Միջազգային նոր բարդութիւնները նորից վտանգ են սպառնում համաշխարհային խաղաղութեան։

Եւրոպական մեծ պետութիւնները, որոնց թւում և Ռուսաստանը, որոշել են ծովային ցոյց կատարել փոքրիկ Չեռնոգորիայի դէմ և նրա վրա ճընշումն գործ դնելով՝ ստիպել նրան վերցնել Սկիւտարի պաշարումը։

Եւրոպական դիպլօմատիայի այդ քայլը մի նոր յաղթանակ է Աւստրիայի համար, որովհետև Սկիւտարի համար ամենից շատ աշխատողը, ձայն բարձրացնողը Աւստրիան է։ Աւստրիան գտել է, որ Սկիւտարն ապագայ անկախ Ալբանիայի բնական մայրաքաղաքն է, և պահանջում է, որ Չեռնոգորիան ձեռք չը տայ այդ քաղաքին։ Իր այդ պահանջը Աւստրիան ներկայացրեց Չեռնոգորիային ուլտիմատումի ձեւով, և երբ բալկանեան այդ փոքրիկ պետութիւնը չը զիջեց, Աւստրիան կարողացաւ Լօնդօնի դեսպանախորհրդի մէջ դնել խնդիրը և որոշել տալ այն մտքով, որ Չեռնոգորիայի դէմ միացեալ ծովային ցոյց կատարվի՝ հարկադրելու համար նրան ենթարկվել մեծ պետութիւնների կամքին։

Եւ ահա մեծ պետութիւնները յայտարարեցին, որ միացեալ ծովային ցոյց պէտք է կազմակերպվի Չեռնոգորիայի դէմ։ Տարակոյս չը կայ, որ մեծ պետութիւնների այդ ծովային ցոյցը միայն Չեռնոգորիայի դէմ չէ, այլ և նրա միւս դաշնակիցների դէմ—Սերբիայի, Բուլղարիայի և Յունաստանի։ Իսկ եթէ աւելի ընդարձակէք խնդիրը, նա մի ցոյց է սլաւոնական աշխարհի, հետեւաբար անուղղակի կերպով և Ռուսաստանի դէմ։

Ուստի և սկզբում ենթադրվում էր, որ Ռուսաստանը կը հրաժարվի մասնակցել այդ ցոյցին, մանաւանդ որ Ռուսաստանի հասարակական կարծիքը սաստիկ վրդովված է Աւստրիայի դէմ, սրա ոտնձգութիւնների պատճառով։ Բայց շուտով յայտնվեց, որ Ռուսաստանը նոյնպէս միանում է մեծ պետութիւնների որոշման և թէև իր սեփական նաւերը չէ ուղարկում, բայց խնդրում է, որ Ֆրանսիան և Անգլիան ուղարկեն իրանց նաւերը։ Ռուսական դիպլօմատիայի անօրինակ զիջողութիւնը և պատրաստակամութիւնը՝ կատարել Աւստրիայի ցանկութիւնը՝ կարելի է բացատրել նրանով, որ նա ունի տուեալներ՝ համոզվելու, որ անհամաձայնութիւնը կարող է առաջ [illegible] Ինչպէս երեւում է, այդպիսի տուեալներ արտաքին գործերի մինիստր Սազօնովը ցոյց է տուել Պետական Դումայի այն անդամներին, որոնց հրաւիրել էր նորերս իր մօտ խորհրդակցութեան համար։ Հետեւաբար, պէտք է ենթադրել, որ Ռուսաստանը ստիպված է զիջողութիւններ անել՝ մի ընդհանուր աղէտալի պատերազմի վըտանգ խափանելու համար։

Բայց միացեալ ծովային ցոյցը կարտադրէ՞ այն հետեւանքը, որին սպասում է եւրոպական դիպլօմատիան, այսինքն բալկանեան դաշնակիցները կը հպատակվե՞ն մեծ պետութիւնների կամքին և պահանջին։ Առ այժմ, ինչպէս երեւում է, ոչ, որովհետև Չեռնոգորիան արդէն մերժել է կատարել պահանջը, իսկ միւս դաշնակիցները, օրինակ Սերբիան, նոյն իսկ օգնական զօրքեր և ռազմամթերք են ուղարկում նրան։

Փոքրիկ Չեռնոգորիայի և նոյն իսկ ամբողջ բալկանեան դաշնակցութեան համար մեծ համարձակութիւն և քաջութիւն է այդպիսի խիզախ դիմադրութիւնը Եւրոպայի միացեալ կամքին, սակայն չը պէտք է մոռանալ, որ ծովային ցոյցը ինքն ըստ ինքեան անվտանգ մի ցոյց է և նպատակ ունի բարոյական ճնշումն գործ դնել Չեռնոգորիայի վրա։ Հարցը կարող է բարդանալ միայն այն ժամանակ, երբ մեծ պետութիւնները որոշեն բռնի կամ զինուորական միջոցների դիմել Չեռնոգորիայի դէմ։ Բայց շատ կասկածելի է, որ այդ դէպքում Ռուսաստանը միանայ պետութիւնների հետ և թոյլ տայ պատերազմական գործողութիւններ բալկանեան երկիրների դէմ։

Եւ գուցէ հէնց այդ համոզմունքն է, որ խրախուսում է Չեռնոգորիային խրոխտ ընթացք բռնել Աւստրիայի և ծովային ցոյցի դէմ։

Այս ամենը ցոյց է տալիս, որ Սկիւտարի հարցը կարող է խիստ վտանգաւոր կերպարանք ստանալ, միջազգային մեծ բարդութիւններ և համաեւրոպական պատերազմ առաջ բերել։

Այժմ քննենք թէ որքան իրաւացի է մեծ պետութիւնների պահանջը բալկանեան դաշնակիցներից՝ ձեռք քաշել Սկիւտարից, չարշաւել Կ. Պօլսի վրա, պատերազմական տուգանք չը պահանջել և այլն։ Այդ մասին յաջորդ անգամ։

Հ. Առաքելեան

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Լոյս մարտի 28-ի գիշերը Նորին Պայծառափայլութիւնը քնեց մի փոքր քիչ, քան անցեալ գիշեր։ Ինքնազգացումը և ոյժերի դրութիւնը բաւարար են։ Տաքութիւնը մարտի 27-ին 37, մարտի 28 ի առաւօտեան 36,1, զարկերակը 62 հազուագիւտ ընդմիջումներով, շնչառութիւնը 28.

—

Լագօդախից մեզ գրում են, որ Կ. Հ. Բ. Ընկերութեան այնտեղի ճիւղի նախաձեռնութեամբ ամսիս 24-ին, կիրակի, պատարագից յետոյ տեղական հայոց եկեղեցում Բ. ք. Սուքիասեանը ծնկաչոք մաղթանք է կատարել Կովկասի փոխարքայի շուտափոյթ առողջութեան և արեշատութեան համար։ Մաղթանքին ներկայ է եղել տեղական հայոց դպրոցի երկսեռ աշակերտութիւնը և աղօթողների խուռն բազմութիւն։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

27 մարտի

Պետերբուրգ.—Պաշտօնական։ Հրաման զինուորական մինիստրութեանը. «1905 Թ. № 804 հրամանագրով իսկական զինուորական ծառայութեան մէջ գտնվող բոլոր զօրականներին անխտիր արգելվեց մասնակցել ու ներ- [illegible] բումների, ժողովների, ցոյցերի։ Թագաւոր Կայսրը բարձրագոյն հրամայել բարեհաճեց յիշեցնել բոլոր աստիճանների պաշտօնական անձանց վերոյիշեալ հրամանագրի ճշգրիտ կատարման մասին։ Բարձրագոյն այդ հրամանի մասին յայտարարում եմ զինուորական վարչութեանը յանձնելով գործադրութիւն և ի ղեկավարութիւն»։ Ստորագրեց զինուորական մինիստր գեներալ-ադիւտանտ Սուխոմլինով։

Ուսումնարանական շրջանի կառավարիչը հրահանգագրեց, որ մայրաքաղաքի միջնակարգ ու ստորին դպրոցների աշակերտութիւնը իրաւունք չունի մասնակցել ամեն տեսակի փողոցային ժողովների ու ցոյցերի։

Լրագրական լուրերի հակառակ «Россія»-ն յայտնում է. «Մենք հնարաւորութիւն ունենք յայտնելու տեղեակ աղբիւրից, որ արտաքին գործերի մինիստրի հրաժարականի լուրերը միանգամայն սխալ են»։

Ներքին գործերի մինիստրը բաղդաւորվեց ստանալու Բարձրագոյն հետեւեալ հեռագիրը. «Հաղորդեցէք տեղական ստնտեսութեան գործերի խորհրդի անդամներին Իմ շնորհակալութիւնը աղօթքների ու սիրոյ եւ հպատակութեան համար։ Ցոյս ունեմ, որ նրանց զբաղմունքները առաջվայ նման պտղաբեր կը լինեն: ՆԻԿՈԼԱՅ»։

—

Կիլ.—Պրինց Հէնրիխը մեկնեց Անգլիա։

—

Բեռլին.—Ռէյխստագում զինուորական օրինագծի քննութեան ժամանակ լեհ պատգամաւոր Սէյդան դէպքից օգտվեց համակրանք յայտնելու հարաւային սլաւոնների ազատագրական կռւին, ասելով իր եզրակացութեան մէջ, թէ Գերմանիան երաշխաւորում է սլբաններին ազգային ու քաղաքական ազատութիւնը, բայց նոյն բանը մերժում է չորս միլիօն լեհերին։

Պրագա.—Բէմեան-Հօլվէգի ճառի առիթով չեխական լրագիրները մատնանշում են, թէ պետական կանցլերը մոռացաւ, որ Աւստրօ-Ունգարիայում սլաւոնները մեծամասնութիւն են կազմում։ Սլաւօն ժողովրդական ներկայացուցիչները ոչ մի գէլլեր և ոչ մի զինուոր չեն տայ, որպէսզի սլաւոնականութիւնը կռւի մղէ գերմանական աշխարհի դէմ։

—

Բուխարէստ.—Կ. Պօլսից հաղորդում են. «Իշխանութիւնը իր ձեռքում պահելու նպատակով կառավարութիւնը դիմում է տէրրօրի, որ յիշեցնում է Աբդուլ-Համիդի ռէժիմը։ Լրտեսութիւնը իր ցանցերը տարածել է լայն չափերով։ Նախկին պաշտօնեաները և ժուռնալիստները ամենափոքր կասկածի դէպքում իսկ աքսորվում են Անատոլիա»։

—

Թաւրիզ.—Ռուսաց հիւպատոսարանի միջամտելուն շնորհիւ բելգիացիների դէմ սկսված շարժումը խափանվեց։

Տեղեկութիւններ են ստացված, որ Թէհրանից փախած ֆէդայիները ժողովվում են Քիրմանշահում, մտադրըվելով անցնել Ատրպատական։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

27 մարտի

Սօֆիա.—«Միր» գրում է. «Մեծ պետութիւններից սպասվող պատասխանից է կախված հաշտութիւն կնքելու հարցը»։

Առանց ժամանակի արձակվեցին մօտ 20,000 զինուոր 45—46 տարեկան հասակի։

Ադրիանուպօլսի զօրքի 170 գերի օֆիցերներին տեղս կը բերեն այսօր երեկոյեան։

Սիլիստրիան զիջելու լուրերը յուզմունք են առաջացնում քաղաքական շրջաններում։ «Դնէվնիկ» թերթը խորհուրդ է տալիս կառավարութեանը Չեռնոգորիայի նման դիմադրութիւն ցոյց տալ։

Լօնդօն.—Րէյտէրի տեղեկութիւնների համաձայն, միջազգային նուաճումը ընդգրկում է Անտիվարիից մինչև Դրինի բերանը ընկած ծովափը։

—

Ցէտինիէ.—Ազգաբնակութեանը Սկիւտարից դուրս թողնելու հարցը ստացաւ նոր ուղղութիւն։ Սկզբում Չեռնօգորիան համաձայնում էր այդ միջոցին, բայց Թիւրք բերդապետը հրաժարվեց թողնել ազգաբնակութեանը առանց Կ. Պօլսի հրամանի. այժմ Բ. Դուռը հեռագրով համաձայնութիւն է յայտնել, իսկ չեռնօգորական կառավարութիւնը անսպասելի կերպով մերժեց Բ. Դրան հեռագիրը յանձնել Սկիւտարի բերդապետին։

—

Զմիւռնիա.—Ցունաց ռազմանաւերը Զմիւռնիայի ծոցի մօտ խուզարկութիւն կատարեցին «Կօրնիլօվ» և «Կայսր Նիկօլայ» ռուսական նաւերում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Պարիզ, 1 ապրիլի (ն. տ.)

Հայկական պատգամաւորութիւնը սպասում է միշտ, հետեւելով ռուսական կառավարութեան խորհուրդներին, մինչև որ հասնի նպաստաւոր րօպէն, երբ Եւրոպան կամենայ զբաղվել հայկական հարցով։ Պատգամաւորութիւնը իր ժամանակը գործ է դնում վերջնականապէս մշակելու բէֆօրմների ծրագիրը։ Որոշված է ներկայացնել մեծ պետութիւններին միայն մի հատիկ ծրագիր յանուն հայ ժողովրդի և Կաթողիկոսի։

Պատգամաւորութիւնը իբրև հիմն ընդունել է 1895-ի յիշատակագիրը և մայիսեան ծրագրի էական օրգանները։ Երբ ծրագիրը վերջնականապէս մշակվի, նա կուղարկվի Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերջնական վաւերացմանը։

Եւրոպական երկիրների զանազան

տեղերում կազմակերպվում են յանձնաժողովներ հայկական դատի պաշտպանութեան համար։ Լոնդոնում Balkan Comity-ն հիմնել է մի հայկական կոմիտէտ (Arménian Comity), որ յարաբերութեան մէջ է մտել ցամաքի ուրիշ խմբակցութիւնների հետ և որը շուտով մի մեծ միջազգային միտինգ է տալու։ Ֆրանսիական կոմիտէտը կազմվել է Պարիզում ժեներալ Լաքրուայի նախագահութեամբ։ Բեռլինում՝ Լէպսիուսը վեհանձնօրէն կանգնել է շարժման գլուխ։

Զանազան երկրների ականաւոր մարդիկ՝ անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք, զուիցերացիք կազմել են կոմիտէտներ, բացառապէս բաղկացած օտարազգիներից՝ հայկական դատի պրօպագանդայի համար, անկախ իրանց՝ հայերի գործողութիւններից։ Այդ զանազան կոմիտէտները յարաբերութեան մէջ են իրար հետ և շատ օգտակար գործ են կատարում։

Ցանկալի էր, որ այդպիսի մի կոմիտէտ կազմակերպվէր և Պետերբուրգում ռուս ականաւոր անձերից։

Ն.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ
ԵՒ
ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

Ֆրանսացի երեսփոխան Բէրտօ «Les Annales Coloniales»-ի մէջ հետևեալը կը գրէ.

«Մեր ռուս և անգլիացի զինակիցները մեզմէ աւելի ուղղակի կը շահագրգռուին հայկական խնդիրով։ Բայց առով մէկտեղ, մեր դիւանագիտութիւնը կատարելիք գեղեցիկ դեր մը ունի։ Ինչպէս յայտնի է, արևելեան ցեղերուն մէջ, հայը ամենէն մտացին, ամենէն գործունեան և ամենէն անտեսողն է։ Յայտնի է նաև, որ Թունաւոր [illegible]նող ատելութիւնը հայերը կը բաժնէ իսլամ ժողովուրդներէն և մասնաւորաբար քիւրդերէն։ Անշուշտ ոչ մէկ օսմ. դահլիճ մեթոդիկ ջարդերու աւանդութեան պիտի ուզէ հետևիլ, բայց օսմ. իշխանութիւնները սկիզբը չկրցան արգիլել Ադանայի սպանդը, ուր 20,000 հայեր խողխողուեցան։ 1910-ին և 1911-ին Մուշի, Բիթլիսի և Դիարբէքիրի բնակչութենէն շատեր յաճախակի զոհ եղան քիւրդ հրոսակախումբերու։ Կարգ մը հայեր այսօր դարձեալ մտատանջուելու պատճառներ ունին։ Այդ հայերը կը յիշեն, թէ Բեռլինի դաշնագրին մէջ երկու յօդուածներ կան, 23-րդ և 61-դ, մին Մակեդոնիոյ և միւսը Հայաստանի մասին։ Հայերը հիմա կը վախնան, թէ Մակեդոնիան Թիւրքերուն ձեռքէն առնուելէ ետք՝ դարաւոր ճնշումի բոլոր լուծը պիտի ծանրանայ իրենց վզին, եթէ կառավարական դրութեան մէջ արմատական փոփոխութիւն մը չըլլայ։ Հայերը կը վախնան նաև, որ Թրակիոյ իսլամները Անատոլու հաւաքուին։ Ատոնք հայաբնակ վայրերու մէջ հաստատուելով կըրնան մեծամասնութիւն կազմել։ Հայերը Լիբանանի նման վարչութիւն մը կուզեն, ընդհանուր կառավարիչ մը, տեսակ մը փոխարքայ՝ սուլթանին կողմէ անուանուած՝ և բաւականաչափ գործադիր ու դատական իշխանութեամբ։ Երկու պետութիւններ, որոնց հակառակութիւնը Համիդի ատեն Հայաստանի դժբաղդութեան պատճառ եղաւ, այս ծրագիրը գլուխ պիտի հանեն. Ռուսիա և Անգլիա։ Ռուսիա արդէն հայկական տէրութիւն մըն է, Կարս, Երևան և Էջմիածին անոր ձեռքը կը գտնուին։ Անգլիա առաջին առթիւ օտար կը կարծուի հայկական դատին, բայց պատմական պարագաներ և տնտեսական լուրջ կապեր զայն կը ստիպեն, որ ասիական այդ երկիրով հետաքրքրուի։ Անգլիա բարոյապէս յանձնառու եղած է գործադրել տալ 61-դ յօդուածը, զոր դնել տուաւ Բեռլինի դաշնագրին մէջ»։

(«Ժամանակ»)

ՄԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐՔԱՅԱՍՊԱՆ ՍԽԻՆԱՍԻ ՀԵՏ

Սալոնիկ հրատարակուող «Մակեդոնիա» թերթին խմբագիրներէն մէկը հետևեալ տեսակցութիւնը ունեցած է Ալէքսանդրոս Սխինասի հետ։

— Յօրգիոս Թագաւորը սպաննողը դո՞ւն ես։

— (Գինովի ձայնով) Այո, ես զարկի։

— Այս մեծ ցածութիւնը ինչո՞ւ գործեցիր։

— Ինչո՞ւ. խենթութեան, խենթութեան, խենթութեան համար։

— Քեզի այս սպաննութեան մղող դրդապատճառը ի՞նչ է, անիշխանութի՞ւնը, ընկերվարութի՞ւնը. դուն ընկերվարական չե՞ս, ինչո՞ւ ուրեմն գաղափարներդ և դաւանած սկզբունքդ կը պահես։

— Գաղափարս՝ ճզմէ, ճզմէ և ջուրը խմէ։

— Ուրեմն չզղջացի՞ր գործած ցածութեանդ համար։

— Ի՞նչ օգուտ, երբ այժմ զղջամ անգամ, երբ եղածը եղած է։

— Ըէվօլվէրը ուսկի՞ց գտար։

— Ութն տարիէ ի վեր ունէի, կը պահէի Իսքէչէ գտնուած ատենէս ի վեր։

— Ինչո՞ւ ըէվօլվէրը չծախեցիր, երբ մանուանդ այնքան նեղութիւններու մէջ կը մը գտնուէիր։

— Չծախեցի անոր համար, որ ըէվօլվէր միշտ պէտք է։

— Շատո՞նց է, որ հոս կը գտնուիս։

— Քսան-քսանհինգ օրէ ի վեր. Աթէնքէն հոս եկայ Գոլոսի ճամբով, հոն ալ քանի մը օր մնացի։

— Հոս ո՞ւր կը բնակէիր և ինչպէս կապրէիր։

— Մի հարցներ թէ ինչպէս կապրէի. կը բնակէի Ուն Կափան Լիզօրին խանը։

— Ոճիրը կանխամտածութեամբ գործեցիր։

— Ըսի արդէն, որ խենթութեան նոպայի մը մէջ գործեցի ոճիրը։

— Բաւական ատենէ ի վեր Թագաւորին կը սպասէիր։

— Այո, բայց ինչո՞ւ կը հարցնես այս բաները. ամէն բան արդէն պարզեցի հարցաքննիչ դատաւորին։

— Այդ պարագային ուրեմն կանխամտածութեամբ սպաննեցիր։

— Կրկնեմ. խենթութեամբ։

— Մեղսակից ունէի՞ր։

— Ոչ մեղսակից ունիմ և ոչ ալ զիս դրդող մը։

— Բարեկամ ալ չունի՞ս. մէկը չեկա՞ւ հոս քեզի այցելութեան։

— Ունիմ բարեկամներ, սակայն անոնք երջանկութեան օրերու մէջ բարեկամ են, դժբաղդ օրերուն չեն հարցներ, չեն փնտռեր։

— Հիմա անկեղծաբար խօսէ, չես վախնար մահուան վճիռէն։

— ... (Արհամարհոտ ընթացք մը փոխանակ պատասխանի)։

Ոճրագործ Սխինասը կը մերժէ կերակուր ուտել, հաւանաբար անօթութենէ մեռնելու համար...

(«Ժամանակ»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԷՊԻ ԱՄԵՐԻԿԱ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՎՏԱՆԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

I

«Մշակի» ներկայ տարվայ № 65-ում տպված էր Ս. Տէր-Մելքիսեդէկեանի մէկ յօդուածը «Դէպի Ամերիկա» վերնագրով, ուր յայտնվում է, որ հայ ազգաբնակութեան սակաւահող և լեռնային շրջաններում մի տեսակ արտագաղթի վարակումն է սկսվել դէպի նոր աշխարհը, որը նրան խոստանում է հարստութիւն, կեանքի ապահովութիւն։

Դա նոյն ցաւն է, երբ մի ժամանակ հայ գիւղացին դիմում էր Բագու, Անդրկասպեան երկիր, ուր իր համագիւղացիներից մի քանիսը քոռ բաղդի բերմամբ հարստացել էին։ Բայց թէ քանի քանիսները՝ թէ ֆիզիքապէս, թէ բարոյապէս և թէ նիւթապէս քայքայվել էին, վախճանվել, այդ նա չը գիտէր։ Եթէ հաշուի առնէին այդ գաղթականութեան պլիւսը և մինուսը, պատկերը աւելի տխուր կը լինէր, և շատ շատերը չէին թողնի իրանց ցամաք հացը, անարատ կեանքը և առողջութիւնը և գնալ զանազան երկիրներ ու քաղաքներ՝ նոր բաղդ որոնելու։ Արդարև պատահում է, որ մի քանի անհատներ յանկարծ հարստանում և միլիօնների տէր են դառնում, բայց հազարաւորները խայտառակ կորչում են, թողնելով ընտանիք, հայրենիք, աւերակ երկիր և այլն։

Մանաւանդ գաղթականութեանը սպառնում է մեծ կորուստ, մահացութիւն զանազան պատճառներից և օտար երկրի կլիմայական ճնշող պայմաններից։ Իբրև ապացոյց այս վերջինի, բերենք մի փոքր տեղեկութիւն Պանամայի ջրանցքի վրա աշխատող բանւորների կեանքից։

II

Ինժեներ Սիսոևը այս տարվայ մարտի 2-ին Մոսկվայի տեխնիքական ընկերութեան մէջ արել է մի շարք հետաքրքրական զեկուցումներ Պանամայի ջրանցքի մասին *)։

Այդ ջրանցքը փորելու սկզբնաւորութիւնը պատկանում է ֆրանսիացի հռչակաւոր ինժեներ Լեսսեպսին, որը, ինչպէս յայտնի է, Սուէզի ջրանցքը փորելու նախաձեռնողն է։

Յիշեալ ինժեները, կազմելով մեծ ընկերութիւն, սկսեց այդ մեծ գործը 1884 թ. և աշխատելով մինչև 1892 թ.—8 տարի—ծախսեց 150 միլիօն ռուբլի և չը կարողացաւ գործը գլուխ բերել։

Եւ անաջողութեան գլխաւոր պատճառն այն էր, որ բաւականաչափ չէր ուսումնասիրված երկրի կլիման։

Մահը անխնայօրէն հնձում էր թէ ինժեներներին և թէ բանւորներին։ Ինժեներ Սիսոևը ցոյց է տալիս հանգստարանի լուսանկարը, ուր թաղված են 1200 ֆրանսիացի ինժեներներ, իսկ հասարակ բանւորների մահացութեան տոկոսը սարսափելի էր, շատ և շատ անգամ աւելի առաջիններից։ Գլխաւոր պատճառը տեղային հիւանդութիւններ են, գլխաւորապէս ջերմախտը—մալարիա—և սարսափելի դեղին տենդը։ Վերջինը տեղաճարակօրէն (эндомическій) տիրում է Ամերիկայում և մօտիկ կղզիներում, ուր տեմպերատուրան բարձր է։

III

Մի քանի տեղեկութիւններ յարմար կը լինի տալ այս*) սարսափելի հիւանդութեան մասին։ Նա, խոլերայի նման տեղաճարակ լինելուց զատ, երբեմն տարածվում է մերձակայ և հեռու վայրերը, ստանալով էպիդեմիական բնաւորութիւն։ Երբեմն այդ հիւանդութիւնը Ամերիկայից անցնում է Եւրոպա. օրինակ Պօրտուգալիայում, Լիսսաբոնում 1857 թ. մինչև 1858 թ. սկիզբը եղել են հիւանդացողներ 19,000, որոնցից վախճանվել են 7000։ Վերջին ժամանակներում Կուբա կղզուց իսպանական զօրքերը դեղին տենդի էպիդեմիան բերին Մադրիդ, ուր մէկ ամսում հիւանդացան 100 հոգի, որոնց 80%-ը վախճանվեց։

Մահացութեան տոկոսը, այդ հիւանդութիւնից, շատ մեծ է, մանաւանդ եկւորների մօտ և այն տեղերում, ուր չը կայ միշտ այդ հիւանդութիւնը. օրինակ՝ Սեվիլում 80,000 բնակչութիւնից հիւանդացել են 76,000 մարդ։ Ջիբրալտարում 9000 բնակչութիւնից միայն 28 հոգի է մնացել առողջ։ Մահացութեան տոկոսը յաճախ հասնում է 75%-ի, միջինը՝ 40%։

Միւս հիւանդութիւնը ջերմախտն է, որը նոյնպէս ուրիշ տեղից, մանաւանդ ցուրտ կլիմա ունեցող վայրերից, եկւորների մէջ տալիս է մահացութեան մեծ տոկոս և առողջութեան սարսափելի քայքայումն։ Մալարիան եկւորների մօտ [illegible] 80%, [illegible] 90% հիւանդացման. մահացութեան տոկոսը նոյնպէս մեծ է։ Մալարիան ցուրտ կլիմայում բնակվող գաղթականների մօտ, երբ նրանք ապրում են մալարիոտ տեղերում, շատ ծանր հետևանք է ունենում։

Ես յիշում եմ իմ պաշտօնավարութեան ժամանակից Զիւանշիր գաւառում հետևեալը. երբ հարկաւորվում էր լեռնաբնակ Խօթայ վանքի կալուածքում բնակվող քիւրդերին բերել տալ պաշտօնական գործերի համար՝ թէ դատարանը և թէ գաւառական վարչութիւնը, ինչ մեծ ահով ու դողով նրանք գալիս էին ամառ ժամանակը. և նրանց վախը մալարիան է, որով հիւանդանում էին շատ ծանր կերպով, ինչպէս մենք քանիցս ականատես ենք եղել։

Այդ քիւրդերը շատ անգամ պատրաստ էին կաշառք տալ, միայն թէ նրանց չը բերեն «արան» տափաստանը։ Ասելիքս այն է, որ մալարիան նոյնպէս շատ մեծ վտանգ է սպառնում այն գաղթականութեան, որը անգիտակցաբար լսելով զանազան ֆանտաստիկ լուրեր՝ վազում է մի անյայտ երկիր, ուր, ճշմարիտ է, մեծ վարձ են տալիս, բայց դժբաղդաբար այդ վերջինը ստացվում է շատ թանգ գնով, յաճախ առողջութեան քայքայմամբ և մահով։ Այդ տեսակ մեծ վարձ ստացվում է և մեզ մօտ ամառ ժամանակ, երբ հունձի ժամանակ տափաստանի թուրք ազգաբնակութիւնը իր ապրանքով քոչում է սարերը և նա երբեմն իր արտի կէսը տալիս է հնձողին, բայց յաճախ չէ գտնվում, որովհետև մալարիայի աղէտաւորութեան պատճառով ցանկացողներ շատ քիչ են գտնվում, իսկ գտնվողները Պարսկաստանի համշարհիներն են լինում, որոնք սովոր են տաք կլիմային։

Բայց եթէ վերոյիշեալ լեռնաբնակ քիւրդերին տաս օրական 100 ռուբլի, նա չէ կամենում իր առողջութիւնը զոհել, թողնելով իր առողջ լեռնային կլիման, լաւ ըմբռնելով որ ամենից թանգը և գնահատելին առողջութիւնն է։

Բժ. Բ. Աղասարեան

(Վերջը միւս անգամ)

ՄԻ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

Վերջերս տեղական մամուլը բաւական զբաղվեց Ն. Սպիլիօտիի *) «Кавказская Школа» ամսագրում զետեղված մի յօդուածով, որ վերաբերում էր վրացի ժողովրդին և առհասարակ Վրաստանին։ Յօդուածագիրը իր յօդուածում այն միտքն էր արտայայտում, թէ մի ժամանակ Վրաստանում տիրում էր խուլ խաւար, և որ վրացի ժողովուրդը ապրում էր նախնական կեանքով։

Սպիլիօտիի ասելով, յետոյ միայն Վրաստանը լուսաւորվեց և այս երկրում խաղաղութիւն տիրեց։

Նրա այսօրինակ բացասական վերաբերմունքը բնականաբար առաջ պիտի բերէր վրաց մամուլի զայրոյթը, որ կատարվեց վերջերս։ Այս առիթով վրաց «Թեմի» թերթը մի յօդուածի մէջ հետևեալ միտքն է արտայայտում.

«Տեղական լրագրութիւնը եթէ տաք բանակռուի առարկայ չը դարձնէր այս յօդուածը, մենք նրա վրա ուշադրութիւն չէինք դարձնի, որովհետև չափազանց աննշան է այս աննախանձելի փորձը գիտական-մանկավարժական թեմայի տեսակէտից, որը պատկանում է լուսաւորութեան մինիստրութեան գաւառական պաշտօնեայ-գիտնականին»։

Ապա թերթը ասում է.

«Մենք չափազանց ցաւում ենք, որ Ն. Սպիլիօտիի այս յօդուածը զետեղված է «Кавк. Школа» հանդէսում, որի առաջադիմութիւնը կը ցանկանք մենք։ Չափազանց ցաւում ենք, որ նա դասախօսութիւններ է կարդում կանանց բարձրագոյն այն դասընթացքներում, որին մենք համակրում ենք և որի գործիչներին պատւում, որպէս լուսաւորված մարդկանց»։

«Թեմի» արտայայտած մտքերի առիթով «Սախալխօ Գազէթի» օրաթերթը հետևեալ խորհրդածութիւններն է անում.

«Ցաւալին այն չէ, որ Սպիլիօտին, որպէս այդ երևում է, գիտնականութեան ոչ մի տաղանդ չէ ունեցել, բայց և այնպէս գիտնականութիւն է անում, այլ ցաւալին այն է, որ Սպիլիօտիի նման գիտնականները Վրաստանը և նրա անցեալը այնպիսի մի բան են ներկայացնում, որի մասին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ՆՈՐ ԾԱՒԱԼՈՒՄՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Ինչպէս երևում է, 1913 թւականը պատմութեան էջերի մէջ պիտի արձանագրվի որպէս եւրօպական միլիտարիզմի ծաւալման տարի։ Թէև ընդամէնը երեք ամիս է, որ թևակոխել ենք այս թւականը, սակայն այդ երեք ամսվայ ընթացքում եւրօպական միլիտարիզմը սկսել է ցոյց տալ զարգացման այնպիսի միտումներ, որոնք մեզ ամենայն իրաւամբ թոյլ կը տան մի այդպիսի ենթադրութիւն անելու։

Այս անգամ էլ, ինչպէս շատ անգամներ, ազդանշանը տուել է Գերմանիան։

Վիլհելմի կայսրութիւնը վերջին երկու տարիների ընթացքում, թէ 1911 և թէ 1912 թւականներին, փոփոխութեան ենթարկելով հաստատված զինւորական օրէնքները, զգալի չափով ուժեղացրել էր արդէն իր ծովային և ցամաքային բանակները, հասցնելով ընդհանուր զինւորական տարեկան ծախսը աւելի քան 2,390 միլիօն ֆրանկի։ Անբաւական համարելով այդքանը, գերմանական զինւորական մինիստրութիւնն այս տարի դարձեալ մի նոր յաւելման հարց է բարձրացրել պահանջողական անհրաժեշտութիւն համարելով ընդհանուր զինւորութեան թիւը 140,000-ով ևս աւելացնել, որով Գերմանիայի զինւորների թիւը խաղաղութեան միջոցին մի միլիօնից կանցնի։

Զինւորական այս նոր օրէնքը, որի քուէարկութիւնը ըէյխստագում տեղի ունենալու մօտ օրերս, մեծ իրարանցում և խանդավառութիւն է առաջ բերել գերման ժողովրդի ու մամուլի մէջ։ Գերմանական բուրժուազիան, արմատական և նացիոնալիստ տարրերը միանգամայն համամիտ են պատերազմական մինիստրութեան այս նոր առաջարկի հետ. իսկ լիբերալները կշեռքի մի թաթի մէջ դնելով այն 500 միլիօն ֆրանկի վնասը, որ կառաջանայ 140,000 հոգու աշխատել դադարելուց և կառավարութեան՝ նրանց վրա անելիք ծախսերից, իսկ միւս թաթի մէջ՝ հայրենիքի պաշտպանութեան ապահովութիւնը, վերջինս աւելի ծանրակշիռ են գտնում։ Եթէ կայ ներկայումս Գերմանիայում մի տարր, որ սկզբունքով և յանուն իր տնտեսական շահերի դէմ է կառավարութեան միլիտարիստական նոր ձգտումներին, դա սօցիալիստ տարրն է, որի ներկայացուցիչները ըէյխստագում բաւական զգալի թիւ են կազմում և որին կառավարութիւնը չէ կարող հաշուի չառնել։ Բայց, ըստ գերմանական ազատամիտ մամուլի տուած տեղեկութիւնների, ներքին արիւնահեղ բաղխումների տեղիք տալ չը կամենալով սօցիալիստները որոշեցին չը մասնակցել զինւորական նոր օրէնքի քուէարկութեանը, և այդպիսով կառավարութիւնն ապահով կերպով անցկացրեց այդ օրէնքը ըէյխստագում։

Ի՞նչն է ստիպում սակայն Գերմանիային այդպէս զինվել. ինչու համար է միլիտարիզմի այդպիսի ծաւալումներ ստանում այդ երկրում։ Պաշտօնապէս չը կայ անյապաղ սպառնացող մի անմիջական վտանգ, ոչ էլ հարևան պետութիւնների կողմից ծրագրված վերահաս յարձակումներ, որոնք արդարացնէին զինման այս անխնայ աշխատանքները։ Սակայն, անպաշտօն կերպով, ի գաղտնութիւն ապագայ հնարաւոր անակնկալների և հեռաւոր նպատակների՝ շատ մօտիվներ կան, որոնք և պայմանաւորում են երկրի նորագոյն զինումը։

Տեսնենք ուրեմն համառօտ կերպով, թէ որոնք են այդ մօտիվները։

Բալկանեան պատերազմի ընթացքում եւրօպական պետութիւնների կոնցերտի մէջ առաջ եկած մի շարք փոփոխութիւնները հանգիստ չեն տալիս Գերմանիային։

Նախկին Թիւրքիան, որ տարիներից ի վեր մի անգնահատելի կամուրջ էր Գերմանիայի համար՝ սփռելու Ասիայի մէջ իր քաղաքական և տնտեսական նուաճումները և միաժամանակ մի զինակից՝ քաղաքական հորիզօնում հնարաւոր անակնկալների հանդէպ, այսօր դադարել է այլևս կատարելու այդ շահաւէտ ծառայութիւնը։ Թանգագին կամուրջը կործանվեց այն օրից, երբ Թիւրքիան ընկաւ քայքայման ուղին և թիւրք-գերմանական մտերիմ յարաբերութիւնները սառեցին մինչև այն աստիճան, որ Թիւրքիայի նախկին բարեկամը չը վստահացաւ անգամ փոխառութիւն տալ նրան։ Գերմանիան կորցրեց իր ամուր յենարաններից մէկը և փոխարէնը շահեց մի վտանգաւոր հարևան յանձին բալկանեան դաշնակից պետութիւնների ու նրանց ապագայ զօրեղացման, որոնց նկատմամբ Վիլհելմի կառավարութիւնը ակնյայտնի թշնամական վերաբերմունք ցոյց տուեց պատերազմի ամբողջ տևողութեան ընթացքում։ Նա դրդեց և թև ու թիկունք հանդիսացաւ Ռումինիային՝ առնձգութիւններ անելու Բուլղարիայի դէմ, որպէսզի այդպիսով կարողանայ արգելք դառնալ դաշնակիցների սերտ աջողութեանը և փրկել վտանգի մէջ ընկած իր բարեկամին, շահելով միաժամանակ Ռումինիայի բարեկամութիւնը։ Սակայն Գերմանիայի այս ծրագիրը վիժեց շնորհիւ Ռուսաստանի միջամտութեան և Բուլղարիայի խոհեմ ընթացքի, որով բուլղար-ռումինական կոնֆլիկտը յանձնվեց մեծ պետութիւնների քննութեանն ու լուծմանը։

Ռուսաստանը, որ Գերմանիայի համար մի զօրեղ մրցակից է թէ Եւրօպայում և թէ մանաւանդ Ասիայում, բալկանեան պատերազմից յետոյ աւելի սպառնալից է դառնում որպէս այդպիսին մի կողմից դաշնակիցների հետ ունեցած բարեկամական յարաբերութիւններով և միւս կողմից՝ Թիւրքիայի թուլանալով։ Ռուս-աւստրիական մերձեցման վերջին փորձերը, որ կատարվեցին Գերմանիայի քթի տակ, թէև ըստ երևոյթին չը տուին սպասելի արդիւնք, բայց պակաս մտահոգութիւն չը պատճառեցին Գերմանիային։

Աւելորդ է յիշել Անգլիայի և Ֆրանսիայի վերաբերմունքը դէպի Գերմանիան։ Այդ պետութիւններից առաջինը երբէք չէ դադարել նրա համար մշտական սպառնալիք և գերիվերոյ մրցակից հանդիսանալուց. իսկ երկրորդը նրա ոխերիմ հակառակորդն է այն օրվանից, երբ կորցրեց իր Ալզաս-Լօտարինգիան և իր երկրի մինչև վերջին հարստութիւնը վագոններով ուղարկեց Գերմանիա, որպէս ֆրանս-պրուսական պատերազմի տուգանք։ Այս երկու երկրների միջև տնտեսական շահերի հակառակութիւնն այնքան խոշոր է և ազգային ատելութիւնն այնքան խորը, որ ոչ մի բան չէ կարող լցնել նրանց միջև բացված վիհը, և նրանք ամենևին չեն դադարի իրար նկատմամբ մշտական սպառնալիք հանդիսանալ, քանի դեռ տևական կը լինեն ներկայ հասարակակարգերը։

Ասել է՝ Գերմանիան, զինակից ունենալով իր հետ Աւստրօ-Ունգարիան և Իտալիան (եռեակ զինակցութիւն)՝ շրջապատված է զօրեղ հակառակորդներով։ Ի դէպ, նորերս Իտալիան մանեօվրներ է արել եռեակ զինակցութեան մէջ առնելու Սպանիային, բայց անաջողութեան է հանդիպել։ Թէև Սպանիան իր աշխարհագրական հեռու և մեկուսացած դիրքով ռազմական դիտումների նկատմամբ այնքան էլ կարևոր նշանակութիւն չէ կարող ունենալ եռեակ զինակցութեան համար, սակայն նա Միջերկրական ծովի վրա ունի մի քանի կարևոր նաւահանգիստներ, որոնք շատ խոշոր դեր կը կատարէին Իտալիայի համար։ Սպանիան մերժել է հրաւէրը, գերադաս համարելով ունենալ եռեակ համաձայնութեան (Անգլիա, Ֆրանսիա և Ռուսաստան) բարեկամութիւնը և վստահանալ իր նաւահանգիստների ապահովութիւնը Անգլիային։

Ահա այս հանգամանքներն են, որ խանգարել են Գերմանիայի և առանձնապէս Վիլհելմի հանգիստը. այս անհանգիստ հեռանկարներն են, որ ստիպողական պահանջ են ստեղծել աւելացնելու երկրի զինւորական ուժը և պաշտպանելու երկրի ապահովութիւնը ապագայ անակնկալների հանդէպ։ Այդ փոթորկալից հեռանկարներն առաջ էլ գոյութիւն ունէին, սակայն բալկանեան պատերազմը, կռուող կողմերին անմիջական հետևանքներ ցոյց տալուց բացի, ունեցաւ նաև այն անուղղակի ազդեցութիւնը, որ սաստկացրեց, համախմբեց ու աւելի զգալի դարձրեց այդ հեռանկարները, ենթարկելով նրանց որոշ փոփոխութիւնների։ Այդպէս են ներգործում ներկայ պատերազմները արդի միջ-պետական յարաբերութիւնների բարդ մեխանիզմի վրա։

Ո՞ւր, ո՞ր երկրում պիտի արձագանք տար Գերմանիայի այս նորագոյն զինումը։ Բնականաբար նախ Ֆրանսիայում, որի զինւորական ուժը ներկայումս մօտ երկու անգամ աւելի թոյլ է, քան Գերմանիայինը։ Եթէ զինւորների ընդհանուր թիւը Գերմանիայում 865,000 է, Ֆրանսիայում՝ նա հասնում է 460,000-ի. առաջինի ունտէր-օֆիցէրների թիւը 93,000 է, երկրորդինը՝ 48,000. առաջինը իր բանակի համար ծախսում է տարեկան 2390 միլիօն ֆրանկ, երկրորդը՝ 1590 միլիօն ֆրանկ. և եթէ Գերմանիան 1883 թւից մինչև 1913-ը զինւորական ծախսերի գումարը շատացրել է 227%-ով, Ֆրանսիան նոյն ժամանակամիջոցում շատացրել է միայն 70%-ով։

Եւ ահա Գերմանիայի այս նոր քայլը մի այնպիսի պանիկ է առաջ բերել Ֆրանսիայում, որ ահա երկրորդ ամիսն է, ինչ ժողովուրդը չը լռված իրարանցման և յուզմունքի մէջ է։ Վերջին երկու ամսվայ ընթացքում ֆրանսիական մամուլին հետևողը միայն կարող է հաշիւ տալ իրան այն անհանգստութեան մասին, որ պաշարել է հանրապետութեան նախագահից սկսած նոյնիսկ առանց քաշվելու և անքաղաքավարի կերպով կարող են գրել։ Պարոն Սպիլիօտին գրիչ է ձեռք առել միայն նրա համար, որպէսզի ապացուցէ, թէ Վրաստանում առաջ «նախնական խաւարն էր տիրում» և միայն յետոյ էր, որ տիրեց լուսաւորութիւն և մարդկանց մէջ խաղաղութիւն։

---

*) «Вокругъ Свѣта» № 11. 1913 г.

*) Ապացուցված է, որ այդ հիւանդութիւնը գլխաւորապէս հաղորդվում է ուրիշ տեղերից գաղթականներին, մանաւանդ եթէ նրանք գալիս են ցուրտ կլիմա ունեցող վայրերից։

*) Ն. Սպիլիօտին Թիֆլիսի կանանց բարձրագոյն դասընթացքներում վարում է դասատուի պաշտօն և միաժամանակ աշխատակցում է «Кавказская Школа» մանկավարժ. հանդէսին։ Ե. Գ.

«Այսպիսի կանխամտածված և միաժամանակ տենդենցիօզ զգացմունքներով լի մարդը միայն կարող է պօլիտիկանութեամբ լեցուն յօդուած գրել, իսկ գիտնականը՝ երբեք»։

Մեզ ծանօթ չեն այն մօտիվները, որոնցով տարված առաջնորդվել է Ն. Սպիլիօտին իր յօդուածը գրած ժամանակ, սակայն մենք մեր կողմից պարտք ենք համարում յիշեցնել պ. յօդուածագրին, որ Վրաստանը որչափ էլ խաւար եղած լինէր մի ժամանակ, այնու ամենայնիւ նա ունեցել է պարաշրջաններ, գեղեցիկ ոսկեդար, որոնցով նա ամենայն իրաւամբ կարող է պարծենալ միշտ և հանապազ։

Վերարտադրեցէք ձեր յիշողութեան մէջ Դաւիթ Աղմաշենեբելի (Շինող) ժամանակները, Թամար թագուհու դարաշրջանը, որը վրաց ոսկեդարն է համարվում, և այլ մի շարք այսպիսի ժամանակաշրջաններ, և դուք կը տեսնէք, որ Վրաստանը ևս ունեցել է իր փառքը, իր մեծութիւնը, իր փառաւոր անցեալը։ Միթէ մեծ չէ կարող կոչվել մի ժողովուրդ, որը, չը նայած իր փոքրաթիւ լինելուն, չքնաղ Թամարի ժամանակ իր տիրապետութեան սահմանները Շիրակ, մինչև Անի է հասցրել և եղբայրական ձեռք մեկնելով հարեւան և եղբայրակից հայ ժողովրդին, պաշտպանել է նրան մահմեդական խուժադուժ հորդաներից իր սեփական զաւակների արեան գնով։

Այն տարբեր խնդիր է, թէ այն ժամանակվայ Վրաստանի պետական մատենագիրները թերևս օգնութեան են հասել հայերին սեփական կաշուի խնդիրն ի նկատի առնելով և մանաւանդ աչքի առաջ ունենալով, որ հետզհետէ ծաւալվող մահմեդականութիւնը հայ ժողովրդի հետ իր հաշիւները վերջացնելուց յետոյ՝ իր ամբողջ ոյժով կառափ պիտի իջեցնէր Վրաստանի անպաշտպան գլխին ևս, ինչպէս և այդ եղաւ յետագայում. բայց միթէ արևի լոյսի նման պարզ չէ, որ Թամարի թագաւորութեան շրջանը լի է նրա գործած ակներև մեծագործութիւններով։ Միթէ վրաց հին գրականութիւնը ապացոյց չէ վրացի ժողովրդի կուլտուրականութեան և եթէ, նոյնիսկ, վերցնելու լինենք միայն անմահ Շոթա Ռուսթավելիի «Վէփխվիս Տղաօսանին», չենք համոզվի արդեօք, որ եթէ մի ժողովուրդ իր միջից ծնել է այսպիսի մի խոշոր տաղանդ, նա կատարեալ իրաւունք ունի իրան քաղաքակիրթ ազգերի շարքը դասելու։

Իսկ եթէ մահմեդական աւերիչ տիրապետութեան ժամանակ Վրաստանը, սրա հետ նաև Հայաստանը, ինչպէս և երբեմնի հզօր արևապաշտ Պարսկաստանը մահմեդականութեան շնորհիւ երբեմն ընկել են կատարեալ խաւարի մէջ, միթէ այդ մեզ իրաւունք է տալիս ասելու, որ Վրաստանը, Հայաստանը և կամ Պարսկաստանը չեն ունեցել իրանց փայլուն դարաշրջանները, պայծառ անցեալը և գեղեցիկ էջերով զարդարված պատմութիւնը։

Բազմաթիւ այլ փաստեր կարող էինք առաջ բերել, բայց լրագրական սուղ էջերը թոյլ չեն տալիս այդ անել։

Աւարտ տալով մեր գրուածքին, պիտի ասենք, որ «պօլիտիկանութիւնը» աւելի քան անհանդուրժելի է գիտութեան մէջ։ Amicus Plato, sed magis amica Veritas.

Յար. Գասպարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի փոխարքայ կոմս Վօրօնցով-Դաշկօվը իր յօբելեանի առիթով բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ ստացաւ և դեռ ստանում է Անդրկովկասի զանազան տեղերից։

◆ Ինչպէս յայտնի է, 1797 թ. Հնդկաստանի Կալկաթա քաղաքում վախճանվում է Մահտեսի Բաբաջան անունով մի հայ վաճառական, որ իր անշարժ և շարժական գոյքը կտակում է յօգուտ Նոր-Նախիջևան քաղաքի հայ հասարակութեան։ Անցեալ դարի 60-ական թւականների սկզբին Նոր-Նախիջևանը ուղարկում է Հնդկաստան յայտնի հայ գրող Միքայէլ Նալբանդեանին, որին աջողվում է բաւական խոշոր գումար ստանալ յօգուտ քաղաքի։ Անցեալ տարի Նոր-Նախիջևանի հայոց եկեղեցական հոգաբարձութիւնը ուղարկեց փաստաբան Յովակիմ Բեգլեանին Կալկաթա, որպէս զի այդ ժառանգութեան խնդիրը լիկվիդացիայի ենթարկէ։ Բեգլեան այժմ «Լոյս» շաբաթաթերթի մէջ շահեկան տեղեկութիւններ է տպագրում Մ. Բաբաջանի թողած ժառանգութեան մասին, որ բաղկանում է այժմ անշարժ գոյքից։ Վերջին նամակից, որ տպված է «Լոյսի» մարտի 24-ի համարի մէջ, երևում է, որ Կալկաթայի անգլիական դատարանը, քննելով գործը մարտի 10-ին, վճռել է յօգուտ Նոր-Նախիջևանի հայոց եկեղեցական հոգաբարձութեան և սա ճանաչվել է իրաւատէր Մ. Բաբաջանի գոյքերի արդիւնքն ստանալու և գործադրելու կտակի համաձայն։

◆ Այսօր, ուրբաթ, մարտի 29-ին, Գրական-Գեղարվեստական Սալօնում տեղի կունենայ երեկոյթ ընդարձակ ծրագրով։ Ա. Քալանթար կը խօսի նոր հոսանքների մասին գեղարուեստի նկարչական և ուրիշ ճիւղերում։ Ժողովականներից մէկը կը խօսի Գարշինի մասին, միւսը Քրիստափոր Կարա-Մուրզայի մասին (նրա գերեզմանի վրա մահարձան դնելու առիթով)։ Կը լինի և երաժշտական մաս։ Սկիզբն է 8½ ժ.։

◆ Մեզ հաղորդում են մի շատ տարօրինակ լուր։ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան և նրա նախագահ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի միջև ծագել է տարաձայնութիւն։ Հոգաբարձութիւնը վիճում է առաջնորդի նախագահական իրաւունքների դէմ, կարծելով թէ հոգաբարձական նիստերին պէտք է նախագահէ ոչ թէ առաջնորդը, այլ հերթական հոգաբարձուն։ Բանից դուրս է գալիս, որ հերթական հոգաբարձուներն այդպիսի իրաւունք ձեռք են բերել այն օրերին, երբ դպրոցի հոգաբարձութիւնը ինչպէս ուզում էր՝ անում էր անարգել։ Նախորդ առաջնորդ Գաբրիէլ արքեպիսկոպոս Սաթունեան, դժբաղդաբար, տեղի է տուել այդպիսի ոտնձգութեան։ Ներկայ դէպքում միակ օրինական ճանապարհը և հարցի միակ լուծում—կանոնադրութեան անխախտ պահպանումն էր։ Ըստ կանոնադրութեան, Թեմական դպրոցի նախագահը՝ Թեմակալ առաջնորդն է, իբրև ներկայացուցիչ հոգևոր բարձր իշխանութեան։ Կը կարողանա՞յ արդեօք Մեսրոպ եպիսկոպոսը պաշտպանել իր իրաւունքները, թէ նա ևս Սաթունեանի և ուրիշ շատերի պէս նախամեծար կը համարի նստել երկու աթոռների վրա, այդ ցոյց կը տայ ապագան։ Ոչ մի կասկած չը կայ, որ եթէ նախորդ թեմակալ առաջնորդները անթերի կատարած լինէին իրանց պարտականութիւնը, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը անկարող կը լինէր ինքնագլուխ ծախսել 180,000 ր. բիւջէտից և նախահաշիւներից դուրս և ձեռնամուխ լինել կասկված գումարներին, և այն հոգաբարձուները, որոնք գործեցին այդպիսի զեղծումն, այսօր պատասխանատւութեան ենթարկված կը լինէին։

◆ Եկող շաբաթ Պետական Խորհրդի 2-դ դեպարտամենտում քննվելու է այն հարցը, որ իրաւունք տրվի Կախէթի երկաթուղու վարչութեանը շարունակել այդ երկաթուղու կառուցումը Սղնախից մինչև Բաքու։ Այս նախագծին դէմ է Կախէթի երկաթուղին կառուցանող Թիֆլիսի վրաց ազնուականութիւնը, որովհետև այդ նոր գիծը իր երկարութեամբ երկու անգամ աւելի է կառուցվող գծից։ Իր կարծիքը պաշտպանելու նպատակով՝ ազնուականութիւնը Պետերբուրգ է ուղարկել յատուկ պատգամաւորութիւն, որ ներկայացել է Պետերբուրգում Կօկօվցեվին և Ռուխլօվին։ Պատգամաւորութիւնը, վերադարձած լինելով Թիֆլիս, երէկ զեկուցում տուաւ ազնուականների ժողովում։

◆ Հաստատ աղբիւրից լսում ենք, որ պօլիտեխնիկումի տեղի հարցը լուծվելու է վերջնականապէս յօգուտ Նաւթլուղի։

◆ Սայաթ-Նովայի արձանի օգտին Հայոց Գրական Ընկերութիւնն ստացել է Սայաթ-Նովայի առաջին հրատարակիչ և ուսումնասիրող հանգուցեալ Գ. Հախվերդեանի քրոջից՝ օր. Աննա Հախվերդեանից 20 ր. և աղջկանից՝ օր. Մանէ Հախվերդեանից 30 ռուբլի։

◆ Բրիւսէլից սեղանաւոր Պատւէ քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի անունով ուղղած նամակի մէջ պատրաստակամութիւն է յայտնում տալ իբրև աւանս 2 միլիոն ռուբլի քաղաքային հերթական ծախքերը ծածկելու համար ի հաշիւ այն խոշոր փոխառութեան, որ պատրաստվում է կնքել Թիֆլիս քաղաքը։

◆ Ձայնաւոր Տէրտէրեանը հրաժարվել է քաղաքային դումայական վերստուգիչ յանձնաժողովի անդամութիւնից։

◆ Թիֆլիսում սաստիկ տարածված է կարմրուկ հիւանդութիւնը երեխաների մէջ։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը առաջարկեց բոլոր քաղաքամասերի պրիստաւներին, 7-րդ ոստիկանատան պրիստաւ Դաւիդօվի օրինակով ամեն օր ժողովեն թաղական վերահսկիչներին և որոշ ծրագրով անակնկալ քննութիւն կատարեն մսագործների վրա, որպէսզի վերջինները միսը չը վաճառեն կամայական գներով։

◆ Պետական Դումայի անդամ Գէլօվանի նախաձեռնութեամբ Պետերբուրգում հոգեհանգիստ է կատարվել վրացի հրապարակախօս Արչիլ Ջօրջաձէի յիշատակին գլխաւորապէս ուսանողների ներկայութեամբ։

◆ Այսօր, ուրբաթ, մարտի 29-ին, Կով. Հ. Բ. Ընկ. դահլիճում կը կայանայ գրական-երաժշտական հանդիսաւոր երեկոյթ. Նկ. Աղբալեան կը դասախօսէ «Բանաստեղծութեան նշանակութիւնը» նիւթի մասին։ Յետոյ տեղի կունենայ գրական-երաժշտական մաս՝ ճոխ ծրագրով, մասնակցութեամբ դերասան-դերասանուհիների, նուագողների ու արտասանողների։ Նաև ապաթէօզ՝ կենդանի պատկեր Գաբ. Սունդուկեանի։ Վերջը պարեր։ Տեղերի գները 1 ր. 50 կ. մինչև 50 կ., աշակ. 30 կ.։ Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։

◆ Օդագնաց Բէքուրօվի թռիչքը սեփական աէրօպլանով նշանակված է կիրակի օրը, ց. ժ. 3-ին։

◆ Մարտի 27-ին Թիֆլիսեցի Գրիգոր Սանտրոսօվը ինքնասպանութեան նպատակով կրակեց «ֆրանկէտ» ատրճանակից գլխին։ Հիւանդանոցում ուշքի չը գալով մեռաւ։

◆ Մարտի 27-ին Կախէտինսկայա փողոցում Սարաջէվի շինութեան կառուցման ժամանակ 19 տարեկան Սիմէօն Գուլոյեանը անզգուշութիւնից ընկաւ երեք յարկ բարձրութիւնից և ստացաւ չափազանց ծանր ջարդուածքներ ամբողջ մարմնից։ Նա պառկած է Արամեանի հիւանդանոցում։

◆ Վաճառական Յարութիւն Յարութիւնեանը իր տանտիրոջ՝ Յակոբեանի հետ դրամական հաշիւների հողի վրա վէճի բռնվեց իր բնակարանում՝ Հալաբարի փող. № 3։ Այդ պահին, Յարութիւնեանի ասելով, անյայտ անձինք նրա սենեակից յափշտակել են 6000 ռուբլու արժէթղթեր։

◆ Հանգուցեալ Ալ. Արասխանեանի և աշխատակիցների ձեռագիրների մի սնդուկ հանգուցեալի ազգական Մ. Բունիաթեանը յանձնել է Հայոց Գրական Ընկերութեանը։

◆ Թոյլատրված է ներկայացնել կովկասեան բեմերի վրա վրացերէն Գլախաշվիլիի 3 գ. «Ջօրվիտ» դրամ. հեքիաթը և Յ. Մալխասեանի «Միկեր» պիեսը հայերէն։

◆ Մարտի 27-ին Թիֆլիսից Երևան և Կարս մեկնեց դատաստանական պալատի քրէական նստաշրջանը։

◆ Գանձակի գաւառի Խաչակապ գիւղի և Ղազախի գաւառի Սև գիւղի ծխ. դպրոցների վարչութիւնները շնորհակալութիւն են յայտնում «Մշակին» համակրող այն մի խումբ աստրախանցիներին, որոնք ներկայ տարվայ ընթացքում մի-մի օրինակ «Մշակ» են նուիրել յիշեալ հաստատութիւններին։ Նոյնպէս՝ Կարճևան գիւղի հասարակութեան կողմից Ս. գ. Տէր-Աբրահամեանը շնորհակալութիւն է յայտնում Թելաւաբնակ Սա. Անդրէասեանին նրա համար, որ վերջինս ինչպէս անցեալ տարիները, նոյնպէս և այս տարի մի օրինակ «Մշակ» է նուիրել յիշեալ գիւղի ծխ. դպրոցին։ Նմանապէս շնորհակալութիւն է յայտնում Գօրու գաւառի Ախալքալաք գիւղի ծխ. դպրոցի աւ. ուսուցիչը եղբ. Յակովլեջանեաններին նրա համար, որ վերջիններս ներկայ տարվայ ընթացքում մի օրինակ «Մշակ» են նուիրել այդ գիւղի դպրոցին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դրամա

Կին գրող Շչէպկին-Կուպերնիկ «Մանուշակագարդ Օրիորդ» պիէսը, որ արվեց Արտիստական թատրոնում չորեքշաբթի, մարտի 27-ին, նուիրված է դերասանական կեանքին։ Հեղինակուհին այդ պիէսի մէջ այն միտքն է յայտնում, թէ դերասանուհու համար շատ դժուար է ստեղծել բաղդաւոր ընտանեկան կեանք։

Նրա գլխաւոր հերոսուհին, որ մի տաղանդաւոր դերասանուհի է (Պասխալօվա), կենակցում է մի փաստաբանի հետ, որը սակայն մի քանի ժամանակից յետոյ գրաւվում է մի ուրիշ օրիորդով և ցանկանում նրա հետ ամուսնանալ։ Դերասանուհին վշտացած է խորապէս և իր վրէժը լուծում է նրանով, որ օրիորդին (Կուզնեցօվա) հրապուրում է բեմական արհեստի վայելքներով և գրաւում դէպի դերասանական գործունէութիւն։

Պասխալօվան դերասանուհու տիպից ստեղծեց մի հոյակապ ամբողջութիւն բարդ կենսունակ հոգեբանութեամբ, զգացմունքների զարմանալի ելևէջների հարազատ արտայայտութեամբ։ Հանդիսականի առաջ նախկին Պասխալօվան էր իր խոշոր դերասանական ընդունակութիւններով և վերին աստիճանի ուժեղ հոգեբանական վերարտադրութիւններով։

Գեղեցիկ կատարեց նաև օրիորդի դերը Կուզնեցօվա, որը մատաղահաս ոյժ է բեմի վրա և հանդիսանում է իբրև բարեխիղճ և շնորհալի դերասանուհի։

Ընդհանուր անսամբլը շատ բաւարար էր։ Աչքի էր ընկնում իր խաղով մանաւանդ Բօրիսօվը անտրեպրենեօրի դերում։ Բօրիսօվի դերի մէջ կար երգեցողութիւն, որը նա կատարեց մեծ ճաշակով։

Թատրոնը լիքն էր ծայրից ծայր։

Հասարակութիւնը վարձատրեց դերակատարներին ջերմագին ծափահարութիւններով։

Ս. Ք.

Օպերետա

Չորեքշաբթի, մարտի 27-ին, Պետերբուրգի օպերէտային խումբը իր երրորդ գաստրոլին դրել էր—առաջին անգամ Թիֆլիսում—«Մաթէօ» նոր օպերէտը՝ երաժշտութիւն Կալմանի։

«Մաթէօն», ինչպէս վաղօրօք յայտարարված էր, ունեցել է խոշոր աջողութիւն մայրաքաղաքների բեմերի վրա։ Այդ իսկ պատճառով չորեքշաբթի երեկոյեան Արքունական թատրոնի ոչ միայն բոլոր տեղերն էին ամբողջապէս բռնված, այլ՝ դահլիճի միջանցքներում դրված յաւելեալ աթոռները. նոյնիսկ կային ոտի վրա կանգնածներ։

«Մաթէօ» օպէրէտան պարփակում է երաժշտական ախորժալուր և նրբահիւս մեղեդիներ՝ լի ամբողջապէս լիրիքական գեղգեղանքներով։ Սիւժէտը, որ վերցված է եւրօպական պալատական կեանքից՝ ունի տեղ-տեղ դրամատիկական բնոյթ կրող շարժումներ, որոնք հանդիսականին մի րոպէ մոռացնել են տալիս ներկայացման օպէրէտա լինելը։

Ընդհանուր առմամբ, «Մաթէօ» օպէրէտան սկզբից մինչև վերջ թողնում է գեղեցիկ տպաւորութիւն, մանաւանդ՝ եթէ աւելացնելու լինենք, որ ներկայ օպէրէտային խումբը խաղում է այն վերին աստիճանի իւրացրած և աջող։

Այդ երեկոյ երգչուհի Պօտօպչինա իր մի քանի նոմէրների կատարումներով ապացուցեց, որ թէև ունի փոքր ձայն, սակայն երգում է զգացված, իսկ պարերի և շարժումների մէջ երևան է հանում կատարելագործված տեխնիկա, պլաստիկական ձևեր և ճկունութիւն։ Պօտօպչինայի համապատասխան պարտնեօր էր Գրէկօվ, որը, սակայն, երբեմն չափազանցութիւնների մէջ էր ընկնում։ Երկուսն էլ մեծ գուարճութիւն պատճառելով հասարակութեան՝ արժանացան վերջինիս կողմից բուռն ծափահարութիւնների և bis-երի։

Հաճելի տպաւորութիւն թողեցին նոյնպէս տ. Բարվինսկայա և նրա պարտնեօր Սաբինին թէ իրանց [illegible] կատարումներով և թէ խաղով։

Լաւ էին և միւս դերակատարները, խօրը և օրկէստրը։

Այսօր կը ներկայացվի—նոյնպէս առաջին անգամ Թիֆլիսում—«Սիրոյ մօտօրը» օպէրէտան, իսկ վաղը՝ երկրորդ և վերջին անգամ՝ «Մաթէօ»։

X.

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԸ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Թիֆլիսի Հայ Ազգագրական Ընկերութեան մէջ չորեքշաբթի, մարտի 27-ին, կայացաւ մի երեկոյթ հանգուցեալ Գաբրիէլ Սունդուկեանի յիշատակին։

Դահլիճը լիքն էր երկսեռ հանդիսականներով։

Ընկերութեան քարտուղար Ե. Լալայեան, բանալով ժողովը, յայտնեց, որ Ընկերութիւնը նուիրել է երեկոյթը Գ. Սունդուկեանի յիշատակին, գտնելով որ Սունդուկեանը իր երկասիրութիւնով նպաստել է Ազգագրական Ընկերութեան նպատակներին՝ լոյս սփռելու Թիֆլիսի բարբառով խօսող հայութեան ազգագրութեան վրա։

Այնուհետև Ալ. Քալանթար արեց մի բանախօսութիւն «Կեանքը Սունդուկեանի դրամատիկական երկերի մէջ» վերնագրով։

Ձօնելով յարգանքի խօսքեր Գ. Սունդուկեանի՝ իբրև հայ մեծ դրամատուրգի յիշատակին, Ալ. Քալանթար ուրուագծեց այն խոշոր դերը, որը կատարեց Գ. Սունդուկեանը հայ թատերագրութեան մէջ, հանդիսանալով իբրև նրա առաջին խոշոր ներկայացուցիչը, ազգային կենցաղական թատերագրութեան ստեղծողը։

Բանախօսը բազմաթիւ օրինակներով ապացուցեց, որ Սունդուկեանի գրչի արդիւնքների ամենախոշոր գիծը նրա ուժեղ կարողութիւնն է եղել՝ ներկայացնել կեանքը իր դրամաներում։ Նրա պիէսները առհասարակ չեն գործել տենդենցիօզ գրուածքների տպաւորութիւն, որովհետև նրանց կենսական ջիղը չափազանց ուժեղ է եղել, սակայն Սունդուկեանի բոլոր պիէսների մէջ կայ մի որևէ հիմնական կենտրոնական հայեցակէտ։ «Պէպօյի» մէջ նա հարստահարութեան և չքաւորութեան պայքարն է ասպարէզ հանել, «Քանդած օջախի» մէջ շռայլ և անհաշիւ կեանքի կործանարար ազդեցութիւնը և այլն։ Սունդուկեանը վերցրել է կեանքի մէջ եղած տենդենցը, նրա երևոյթների կենցաղագրական լօգիկան և դրել իր պիէսների մէջ։

Բնորոշելով Սունդուկեանի ստեղծագործելու էութիւնը՝ բանախօսը ցոյց տուեց, որ Սունդուկեանը ներկայացնելով կեանքը վերարտադրել է նրան բնորոշ գծերով՝ հետեւելով աւելի խոր արտացոլման, քան լուսանկարչական մեքենայական անդրադարձումը կարող է տալ։ Սունդուկեանը գործ է ունեցել հոգեբանական բնորոշումների և գեղարուեստական վերապրումների հետ։

Սունդուկեանը թէև երբեք չէ ղեկավարվել ազգագրական նպատակներով, բայց նա տուել է իր երկասիրութիւններով թանգագին ազգագրական նիւթ Թիֆլիսի հայութեան կեանքից։ Նրա պիէսները ամենահարուստ գանձերն են կենսական այն նիւթերի, որոնցով կարելի է ճշգրիտ գաղափար կազմել միջավայրի էութեան մասին։

Սունդուկեանի պիէսները շօշափել են Թիֆլիսի հայութեան կեանքի անցողական

մինչև ամենապարզ քաղաքացուն ու գիւղացուն, նա միայն կարող է վերահասու լինել այն բազմազան բացատրութիւններին Գերմանիայի նպատակների առիթով դէպի Ֆրանսիան, որոնք չափազանցված իրականութիւնից հասնում են մինչև ամենախայտառակ առասպելների։

Ֆրանսիայի պատերազմական մինիստրութիւնը երկար ու բարակ կշռադատելուց յետոյ հարկադրական հարց է դնում մինիստրական կաբինետի առաջ վերստին դառնալ 1905 թւի զինուորական օրէնքին, այսինքն՝ զինուորական ծառայութեան տևողութիւնը նորից դարձնել երեք տարի, որպէսզի հնարաւոր լինի հասարակապետութեան զինուորների որակը բարձրացնել և որակի առաւելութեամբ հակակշռել Գերմանիայի զինուորական գերակշռող քանակին։ Պատերազմական մինիստրութեան այս անյետաձգելի հարցադրումը, որին ընդառաջ են գալիս երկրի բուրժուա, արմատական և լիբերալ տարրերը, համարելով նրան մահու և կենաց խնդիր, միահամուռ ընդունելութիւն չէ գտնում մինիստրական կաբինէտում, որը տարաձայնութիւններ է յարուցանում և, առանց դեռ որևէ որոշում ստանալու մինիստրութեան մէջ, դառնում է հասարակութեան սեփականութիւն։ Սկսվում է հասարակական տարբեր խաւերի և տարբեր դասակարգերի մէջ մի կատաղի պօլեմիկա, որ ողողում է ամբողջ ֆրանսիական մամուլը անհամբերատար կծու յօդուածներով և երկրի կարևոր կենտրոնավայրերը բազմամարդ աղմկալից միտինգներով։ Հրապարակ են դրվում զինուորական օրէնքի հետ նաև ընտրողական օրէնքների րէֆօրմները։ Իրար դէմ են դուրս գալիս մի կողմից սօցիալիստները և միւս կողմից՝ հասարակական բոլոր միւս տարրերը և սոսկալի մեղադրանքներ են թափում իրար գլխի։ Առաջինները եռամեայ զինուորական ծառայութեան վերականգնումը գտնում են միանգամայն քայքայիչ յատկապէս բանւոր ու աշխատաւոր դասակարգի համար։ Եթէ խոշոր և մանր բուրժուաները և առհասարակ ապահովված տարրերը համարեա ոչինչ կամ շատ քիչ բան կը կորցնեն երեք տարի զինուորական ծառայութեամբ զբաղվելով, — առարկում են նրանք,—բանւորներն ու աշխատաւորները, օրավարձով ապրող այս տարրերը, միանգամայն կը խորտակեն իրանց առանց այն էլ անապահով տնտեսութիւնը։ Բացի այդ, նորից կենդանացնելը մեծ զոհողութիւններով թաղված դիակը՝ մի չը լսված յետադիմութիւն կը լինէր հանրապետութեան համար։ Սօցիալիստներին է միանում նաև ֆրանսիացի ուսանողութիւնը այն նկատառութեամբ, որ եթէ զինուորութիւնը պահպանում է երկրի ապահովութիւնը, ապա ուսանողութիւնը պահում և ծաղկեցնում է ֆրանսիական բարձր գիտութիւնը, որ նոյնքան մահու և կենաց խնդիր է, ինչքան առաջինը։ Ի՞նչ կը լինի ֆրանսիական գիտութեան վիճակը,—գոչում է ուսանողութիւնը,—եթէ գիտութեան զինուորներին ստիպեն երեք երկար ու ձիգ տարիներ ընդհատել իրանց ուսումը, բթանալ զինուորանոցների տափակ մթնոլորտի մէջ և այլ ևս անընդունակ դառնալ իրանց կոչմանը։

Միւս կողմից բուրժուական բանակը քարկոծում է սօցիալիստներին, անուանելով նրանց ազգի դաւաճաններ, հայրենիքի կորուստը ցանկացողներ և այլն և այլն։

Ժողովրդի յուզմունքը իր գագաթնակէտին է հասնում, մի խորը անհամաձայնութիւն է ծագում երկու խորհրդարանների մէջ, առաջ է գալիս մինիստրական կրիզիս և գործը հասնում է մինչ այն կէտը, որ Արիստիդ Բրիանի մինիստրութիւնը տապալվում է։

Հասարակապետութեան նորընտիր նախագահ Պուանկարէն երկար որոնումներից յետոյ հրաւիրում է Լուի Բարտուին՝ կազմելու նոր մինիստրական կաբինէտ։ Վերջինս ընդունում է նախագահի հրաւէրը այն պայմանով, որ սենատի կօմիսիան համաձայնվի ընդունել ընտրողական օրէնքների րէֆօրմների նկատմամբ փոքրամասնութիւնների ներկայացուցչութեան սկզբունքը, որի առհաւատչեան պիտի որոնել երկու խորհրդարանների փոխադարձ համերաշխութեան և լայն գործակցութեան մէջ, և որ ինքը վստահ լինի, որ նոր կաբինէտի բոլոր անդամները կողմնակից կը լինեն երեք տարվայ զինուորական ծառայութեան։

Այսպէս է ահա ներկայ միլիտարիզմը։ Նա, փոխանակ նուազելու, ինչպէս ցանկանում ու երազում են անսահման իդէալիստ խաղաղասէրները և նրանց նոյնքան իդէալիստ համաժողովները, ընդհակառակը, օր աւուր աճում, աւելի մեծ ծաւալներ է ստանում, աւելի մեծ թւով աշխատող ձեռքեր է գրաւում՝ զրկելով նրանց աշխատելուց ու քայքայելով նրանց տնտեսութիւնը, հետզհետէ աւելի խոշոր, աւելի հսկայական գումարներ է կլանում և յետ է խլում ու ոչնչացնում երկար տարիների աշխատանքներով և բազմաթիւ զոհողութիւններով ձեռք բերված ազատ և առաջադիմական կարգերը։ Ներկայ դէպքում Ֆրանսիայի ակամայ դարձը դէպի նախկին եռամեայ զինուորական ծառայութիւնը վերոյիշեալի առիթով՝ մի պերճախօս օրինակ է հանդիսանում։

Դժբաղդաբար նա, միլիտարիզմը, կապված է արդի կապիտալիզմի հետ և պայմանաւորված՝ նրա նուաճումներով ու այդ նուաճումների պահպանման պահանջով, ուստի, անհրաժեշտօրէն նա պիտի տևէ և ծաւալի այնքան, որքան տևելու և զարգանալու է կապիտալիզմը և, ցաւօք սրտի, չքանալու է ոչ թէ բարի ցանկութիւններով կամ գրչի մի շարժումով, այլ միայն նրան ծնունդ տուող ֆակտօրի վերանալով։

Ա. Զ.

Ժընև

շրջանի երեւոյթները, ուրտեղ հին աւանդական կեանքը շփվում է նորի հետ, ուրտեղ ասիականը ընդհարվում է ռուսականի, եւրօպականի հետ։ Սունդուկեանը, ցոյց տալով հին աւանդական կեանքի հրաշալի պատկերները, ամենեւին չէ ցանկանում տեսնել կեանքը քարացած, այլ կոչ է անում դէպի նոր կեանք, դէպի կնոջ ազատութիւն, դէպի սրբազան զգացմունքների եւ անհատական զարգացման անկապտելի իրաւունքները։

Սունդուկեանի գրուածքներից շատ բան մտել է ասացուածքների եւ առածների շարքը, դառնալով ժողովրդական սեփականութիւն։

Բանախօսը վերջացրեց իր ճառը ընդգծելով այն էական կէտերը, որոնցով Սունդուկեանը դառնում է հայ գրականութեան եւ կուլտուրայի անմոռաց զարդ եւ գանձ։

Այնուհետեւ ջութակահար Վրոյր նուագեց աքեսլեան մի հագներգութիւն, որի մէջ կային տարբեր վերցված «Կռունկից» եւ ուրիշ տաղերից։ Նուագածութիւնը արժանացաւ հաւանութեան։

Դերասան Տէր-Դաւթեան իրան յատուկ տաղանդով ներկայացրեց Կակուլլին նրա զգեստով եւ դերով, ստանալով առատ ծափահարութիւններ։

Գ. Միրաղեան կարդաց Սունդուկեանի պիէսների մասին Թիֆլիսի բարբառով մի շահեկան գրուածք, որը հետաքրքրեց հանդիսականներին եւ արժանացաւ ջերմ ծափահարութեան։

Տիկին Ն. Դոլուխանեան կարդաց «Էլի մէկ զոհ» պիէսից երեք կտոր՝ Անանիի դերից։ Տիկինը արտասանում է պարզ, ընդգծելով բառերը։ Հասարակութիւնը ջերմագին ծափահարեց։

Վերջում տեղի ունեցաւ ասիական նուագածութիւն թառի վրայ։

Հիւրերը հեռացան ժամը 12-ին գեղեցիկ տպաւորութեան տակ։ Ն—ն

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Dr. phil. B. Ischchanian. „Die ausländischen Elemente in der russischen Volkswirtschaft", Berlin, 1913.

Դօք. փիլ. Բ. Իշխանեան. **«Արտասահմանեան էլեմենտները ռուսական ժողովրդատնտեսութեան մէջ»**, Բերլին, 1913. XVIII+300 մեծադիր էջ, գինն է 7 մարկ։

II*)

Գրքի երկրորդ հատուածը (չորս գլուխներ) կազմում է մեծ մասամբ վիճակագրական բաժինը։ Այստեղ մենք ծանօթանում ենք արտասահմանեան տարրերի ներգաղթման եւ արտագաղթման փաստերի հետ երկար շրջաններում, ուր օտարների ներգաղթումը մշտապէս գերազանցել է քանակով, բացի յեղափոխութեան տարիներից (1905—1907)։ Այնուհետեւ կարդում ենք բոլոր օտարերկրացիների թուի եւ տերիտօրիական տարածման պատկերը՝ մեծ կենտրոններում, քաղաքներում եւ գաւառներում օտարների կենտրոնացման թւական յարաբերութիւնը իրար մէջ։ Այդ հատուածի մէջ ամենահետաքրքրական գլուխը կազմում է IX-ը, ուր հեղինակը մանրամասն կանգ է առնում բոլոր արտասահմանցիների (12 երկրներից) պրօֆեսիօնալ խմբաւորման եւ սօցիալական շերտաւորման վրա ռուսական ժողովրդատնտեսութեան բոլոր ճիւղերում։ Նա տնտեսական բոլոր կոչումների խմբերը—թւով 50 հատ—վեր է ածում ութ խոշոր կլասիֆիքացիաների, որոնց մէջ հեղինակը առանձնապէս պարզաբանում է երկրագործութիւնը, արդիւնաբերութիւնն ու առեւտուրը եւ վարձու աշխատանքը։ Նա գալիս է այն եզրակացութեան, որ արտասահմանցիութիւնը վերոյիշեալ 3 կատեգօրիաներում դասակարգային խիստ արտայայտված ներկայացուցչութիւն ունի։ Եւրօպական տարրերը (օրինակ գերմանացիներ, անգլիացիներ, ֆրանսիացիներ, շվէդներ, բելգիացիներ եւ այլն) մատակարարում են տիրապետող դասակարգերի ներկայացուցիչներ, իսկ ասիական տարրերը (օրինակ պարսկաստանցիներ, չինացիներ, թիւրքեր) սեւ աշխատանքի բանւոր ներկայացուցիչներ։

Երրորդ կամ վերջին հատուածը բռնում է գրքի կէսից շատ աւելին (11 գլուխներից բաղկացած)։ Այդ հատուածը՝ «Արեւմտեան եւրօպացիների կապիտալիստական եւ ֆինանսական նուաճումները ռուս ժողովրդական եւ պետական տնտեսութեան մէջ» վերնագրով՝ միանգամայն այժմէական բնաւորութիւն ունի։ Հեղինակը, համառօտ ակնարկներով հերքելով հին նարօդնիկական իդէալիզմը՝ ռուսական կապիտալիզմի զարգացման հարցում, տեսական ընդհանուր բնորոշումներով յիշում է արտահանվող կապիտալիզմի շահագործման հետեւանքները՝ մի կողմից արտահանող երկրների ֆինանսական օգուտները, միւս կողմից ներմուծվող երկրի (Ռուսաստանի) կուլտուրական առաջադիմութեան տեսակէտից։

Առանձնապէս կանգ է առնում նա ռուսական պետական եւ երկաթուղային արտաքին պարտքերի վրա, տալով մանրամասն ցուցակը (եր. 196) ռուսական բոլոր արտաքին պարտքերի՝ սկզբից մինչեւ մեր օրերը (1769—1909), յիշելով թէ այդ պարտքերը որ երկիրներում եւ ինչ ծանր պայմաններով են արված։ 140 տարվայ ընթացքում ռուս պետութիւնը վերցրել է 72 անգամ միայն արտաքին պարտք (Հոլլանդիայից, Իտալիայից, Անգլիայից, Գերմանիայից եւ Ֆրանսիայից), ընդամենը մօտ 1½ միլիարդ մարկ։

XIX-րդ գլխի մէջ (241 էջ) ուրուագծում է Իշխանեանը եւրօպական բովանդակ կապիտալի թւական մեծութեան մի համառօտ պատկերը, կանգ առնելով կապիտալիստական երկիրների շահերի վրա առանձին-առանձին, որոնք հսկայական արժէքներ ունեն Ռուսիայում՝ ֆինանսական եւ արտադրական (պրօդուկտիվ) կապիտալի ձեւով։ Ինչ չափով են մասնակցում այդ երկիրները, դա տեսնում ենք հետեւեալ թւերից։ (էջ 253)։

	Առհասարակ արտասահմանում	Միայն Ռուսաստանում	Վերջինիս տոկոսը
Ֆրանսիան ունի	40 միլիարդ ֆր.	11 միլիարդ ֆր.	27,50%
Գերմանիան	» 26 » մարկ	4 » մարկ	15,50%
Անգլիան	» 63 »	» 775 միլիօն մարկ	1,20%
Բէլգիան	2715 միլիօն ֆր.	634 միլիօն ֆր.	23,40%
Միւս երկիրները	— —	500 միլիօն մարկ	—

Պատկերը ուշագրաւ է։ Եւ այդ վիթխարի գումարից, որ մարկի վերածելով ստանում ենք աւելի քան 14½ միլիարդ մարկ (ճիշդ 14,582.000,000), միայն ռուսական պետութեան արտաքին պարտքը կազմում է 12,212.979,200 մարկ։ Նշանակում է՝ ընդամենը 2,368.020,800 մարկ (կամ ընդհանուր գումարից 16,24%) արտասահմանեան կապիտալը շահագործվում է արտադրական-կուլտուրական նպատակների վրա (ինդուստրիայի, առեւտրի, հաղորդակցութեան միջոցների եւ կօմունալ հաստատութիւնների մէջ)։ Ահա ինչի մէջ է կայանում ռուս ժողովրդական տնտեսութեան դժբաղդութիւնը։ Արտասահմանից տեղափոխվող կապիտալի մեծագոյն մասը գործադրվում է սպառողական, այսինքն անարդիւնք, անտեսապէս անարժէք նպատակների վրա։ Այդ հսկայական գումարի (ֆինանսական եւ արտադրական կապիտալը միասին վերցրած) տարեկան շահը 5%-ով՝ կազմում է ոչ պակաս քան 729.100,000 մարկ, որ ռուսական տնտեսութիւնը վճարում է Եւրօպային, դեռ անկախ արտասահմանցիների ռոճիկներից, դիվիդենտներից եւ այլ օգուտներից։

«Երկրագնդի երեսին ոչ մի պետութիւն չունի այնքան արտաքին պարտքեր եւ չէ վճարում այնչափ պարտատոկոսներ համաշխարհային բանկիրներին՝ Պարիզում, Բերլինում, Լոնդոնում եւ Ամստերդամում, որքան Ռուսաստանը։ Ոչ մի պետական բիւջէ չունի այնքան անարտադրական (ոչ պրօդուկտիվ) ծախսեր, որքան ռուսականը։ Բոլոր քաղաքակիրթ երկիրների մէջ Ռուսաստանը ծախսում է մտաւոր-կուլտուրական եւ նիւթական արտադրական նպատակների եւ կարիքների համար ամենից քիչ։ Բոլոր մեծ պետութիւնների մէջ Ռուսաստանը ծախսում է զօրքի եւ սպառազինման վրա ամենից շատ...»։

Այս եզրակացութեան յանգում է Իշխանեանը փաստական բազմաթիւ համեմատութիւններ անելուց յետոյ՝ Ռուսաստանի եւ միւս երկիրների միջեւ։

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում գրքի վերջին երկու գլուխը (եր. 255 եւ 274), ուր մանրամասն օրինակներով պարզաբանում է հեղինակը այն հարցը, թէ ինչ տնտեսական-կուլտուրական եւ ֆինանսական դրական հետեւանքներ է ունենում ներմուծվող օտար կապիտալի շահագործութիւնը ռուսական ազգաբնակութեան զանազան խաւերի եւ պետական գանձարանի համար։

Ապա այն հարցը, թէ ինչ շանսեր ունի այժմ եւրօպական կապիտալը Ռուսաստանում, որոնք են այն կարեւոր սահմաններն ու հաստատութիւնները՝ ներմուծվող կապիտալիզմի նուաճումների համար։ Այնուհետեւ հեղինակը հեռանկարում է ռուսական կապիտալիզմի զարգացման ապագայ ձգտումները եւ նրա վերջնական ազատագրութեան հնարաւորութիւններ եւրօպական կապիտալիզմի խնամատարութիւնից, օրինակ ծառայեցնելով Ամերիկայի Միացեալ Պետութիւնները։ Ռուսական բուրժուազիայի լօզունգը՝ «Ռուսաստանը ռուսների համար»՝ պիտի լինի ապագայում մի նոր Մօնրօէ-դօկտրին՝ ռուսական գունաւորումով։

Անշուշտ ռուս նացիօնալիստը չէ կարող գոհ մնալ Իշխանեանի ուսումնասիրութիւնից։

Հեղինակը քննադատում է, որոշ կէտերում նոյն իսկ խիստ տոնով, ռուս պահպանողական տնտեսագէտների եւ յետամնաց հրապարակախօսութեան («Новое Время» եւ ընկ.) յարձակումներն ու հալածանքը՝ արտասահմանցիների եւ օտար կապիտալի դէմ, ցոյց տալով թէ ինչպիսի ստեղծագործող ֆակտօրներ եւ յեղաշրջող ներգործումներ են ունեցել օտարի տեխնիկան եւ կապիտալը նախապետական Ռուսաստանում։ Եւ որովհետեւ այդ կէտը կարմիր թելի նման անցնում է գրքի սկզբից մինչեւ վերջը, ուստի հեշտութեամբ, թէեւ անարդար, ռուս նացիօնալիստը կարող է Իշխանեանի վերաբերմունքը միակողմանի եւ միտումաւոր (տենդենցիօզ) անուանել։

Մի նկատողութիւն։ Մի այսպիսի աշխատութիւն, որ նպատակ է դրել ռուսական կապիտալիզմի պատմական զարգացման այն էջերը քրքրել ու վերլուծել, ուր եւրօպացիները իրանց ձեռներէցութեամբ ու կապիտալով առաջնակարգ գործօնի դեր են խաղացել, պէտք է հեղինակը աշխատէր ռուսական արխիւները ուսումնասիրել այդ հարցերի վերաբերեալ. իսկ դրա համար անհրաժեշտ էր նրան ամիսներով աշխատել Պետերբուրգի Публичная библiотека-ում։ Ինչպէս երեւում է, այդ հնարաւորութիւնը չէ ունեցել մեր հեղինակը, եւ իր նիւթերի համար մեծ մասամբ նոր աղբիւրներ է ձեռքի տակ ունեցել։ Դա անշուշտ ակամայ մի թերութիւն է, որ կարելի է լրացնել երկրորդ հրատարակութեան ժամանակ։

Մասնագիտական տեսակէտով չէր, որ տողերիս հեղինակը կամենում էր մօտենալ մեր առաջ դրած հետազօտութեան։ Տարակոյս չը կայ, որ այդպիսի մի խոշոր աշխատութիւն իր առաւելութիւնների հետ միասին՝ որոշ թերութիւններ եւս կարող է ունենալ, որոնց վրա կանգ առնելը մեզ շատ հեռու կը տանէր. դրա համար էլ մենք բաւականացանք օբիեկտիւ կերպով գրքի հետաքրքրական գլուխների բովանդակութեան համառօտ յիշատակումը անել։ Մեր կարծիքով՝ այս ուսումնասիրութիւնը յամենայն դէպս խիստ յանձնարարելի է եւ տարակոյս չը կայ, որ հեղինակը օրինակելի եռանդ եւ տոկուն աշխատանք է գործ դրել։

Դր. Ա. Շահրաղ

Բերլին

*) Տես «Մշակ» № 68.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 27 մարտի

Գայեանեան օրիորդաց դպրոցում կազմակերպված է ընդհանուր աշակերտական նախաճաշ, որին մասնակցում են 200 հոգի։ Չքաւոր աշակերտուհիները՝ թւով 80 հոգի՝ ստանում են ձրի նախաճաշ, մնացածները օգտվում են ամսական որոշ վճար (առայժմ ամսական 1 ր. 20 կ. մասամբ 1 ր. 50 կ.) տալով։

Նախաճաշի կազմակերպման գործում եռանդուն աջակցութիւն են ցոյց տալիս աշակերտուհիների ծնողները եւ դպրոցիս մօտ կանգնած նախկին աշակերտուհիները։

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ միմիայն ձրի նախաճաշողների համար օրական ծախսվում է մօտ 5 րուբլի, ուստի եւ դպրոցի վարչութիւնը եւ նախաճաշիկ կազմակերպող յանձնաժողովը ստիպված է այդ բացը՝ ամսական մօտ 125 րուբլի՝ ծածկել մասնաւոր նուիրաբերութիւններով։ Փետրվարի 1-ից մինչեւ մարտի 25-ը դրամով ստացված է 179 ր. 75 կ., իսկ նիւթերով մօտ 36 ր. 50 կ.։

Դպրոցիս վարչութիւնը եւ նախաճաշիկ կազմակերպող յանձնաժողովը իրանց խորին շնորհակալութիւնն են յայտնում կոմսուհի Վօրօնցօվա-Դաշկօվային, իշխանուհի Մ. Թումանեանին, տ. տ. Ալիբէգեանին, Անդրէասեանին, Արարատեանին, օր. Ալիխանեանին, տ. եւ պ. Ատովմեաններին, պ. Աֆրիկեանին, տ. Բարխուդարեանին, պ. Դանգուրեանին, տ. Զոհրաբեանին, պ. Էրիվանցօվին, տ. Թադէոսեանին, տ. եւ պ. Խանդուլեաններին, տ. Խոյեցեանին, տ. Կաճկաճեանին, տ. Մելիք-Բախտամեանին, տ. Մելիք-Բէգլարեանին, տ. Մնացականեանին, պ. Մուրադբէգեանին, տ. Յարութիւնեանին, պ. Մսերեանին, տ. Ռոստինեանին, պ. Սաղաթելեանի, պ. Սեանեանին, օր. Սիրունեանին, պ. Վարդպատրիկեանին, պ. Տէր-Մեսրոպեանին, տ. Տէր-Ղեւոնդեանին, օր. Օհանջանեաններին։ Միաժամանակ շնորհակալութիւն են յայտնում եւ Վարդան ք. Տէր-Ղեւոնդեանին եւ պ. Ղուկասեանին, որոնք իրանց ծանօթների շրջանում յօգուտ նախաճաշի դրամ հաւաքելով՝ աջակցած են դպրոցիս վարչութեան։

Դպրոցիս հոգաբարձութիւնը եւ մանկավարժական խումբը իրանց խորին շնորհակալութիւնն են յայտնում եւ այն տիկիններին ու օրիորդներին, որոնք իրանց վրա են վերցրած աշակերտութեան նախաճաշ մատակարարելու գործը։

Ի դիմաց դպրոցի վարչութեան
Տեսուչ դպրոցի՝ Ս. Աբովեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Բիթլիսում, Էրզրումում եւ Վանում քիւրդերը տենդային սպառազինման գործողութիւնները շարունակում են. Գաղթականութեան հոսանքի առաջը դէպի Ռուսաստան անկարելի է առնել։ Կ. Պոլսի հայոց պատրիարքի խնդիրքով ֆրանսիական եւ ռուսական դեսպանները պահանջեցին Բ. Դռնից զօրքեր ուղարկել Քիւրդստան հայկական ջարդերը խափանելու համար։ Բ. Դուռը կարգադրել է ուղարկել զօրքեր։

✦ Կ. Պոլսում տիրում է յուսահատական կացութիւն։ Չաթալջայում թիւրքերը կրում են սոսկալի պարտութիւններ։ Ադրիանուպօլիսը պաշարող թնդանօթները արդէն Չաթալջայումն են։ Եթէ շուտով հաշտութիւն չը կնքվի, բօլգարները կերեւան Կ. Պոլսի առաջ. Երիտասարդ-թիւրքերը սպառնում են, որ բօլգարները կը հանդիպեն երկրորդ հրդեհված Մօսկվայի։

✦ Սերբիան եւ Չերնօգօրիան հրաժարվեցին բանակցութիւններ վարել հաշտութեան մասին, քանի որ Սկիւտարը անձնատուր չէ եղել։

✦ Պետերբուրգում ռումին-բօլգարական դեսպանաժողովում ձայների մեծամասնութիւնը կողմնակից եղաւ Սիլիստրիան յանձնելու Ռումինիային։

✦ Իտալիան պահանջեց Յունաստանից յետ կանչել իր զօրքերը Եպիրոսի այն տեղերից, որոնք անցնելու են Ալբանիային։ Եթէ Յունաստանը Չերնօգօրիայի եւ Սերբիայի օրինակով յետ չը կանչէ զօրքերին, այն ժամանակ Իտալիան զօրքեր է ափ իջեցնելու Եպիրոսում։ Այդ առիթով Հռոմում տեղի են ունենում զինուորական խորհրդակցութիւններ. Իտալական 6 ռազմանաւ կնքված ծրարներով մեկնել են Սիկիլիայից։

✦ Վիէննայում խօսում են, թէ իբր դաշնակիցները գրաւել են Ալէսիան։

✦ Ֆրանսիական դեսպան Դելկասէն բօլգար-ռումինական վէճի աջող լուծման առիթով անսպասելի կերպով մեկնեց Պետերբուրգից։

✦ Ռուսաց արտաքին գործերի մինիստրը Դումայից խնդրում է 85,000 րուբլի գաղտնի ծախսերի համար։

✦ Պետերբուրգի քաղաքապետ Ջունկօվսկիի կարգադրութեամբ ռօտմիստր Տրեշչենկօվը կալանաւորվեց 30 օրով իշխան Նիժարաձէի հետ Պետերբուրգի կաֆէ-շանտանում ընդհարվելու համար։

✦ Արդարադատութեան մինիստրութիւնը մշակում է նոր օրինագիծ մասնաւոր հաւատարմատարների մասին։

✦ Կոկօվցեվը շատ խիստ վերաբերվեց Պետերբուրգի քաղ. դումայի այն որոշմանը, որով 15,000 րուբլի յատկացվեց յօգուտ զինուորա-բժշկական ճեմարանի արձակված ուսանողների։ Կոկօվցեվը այդ որոշումը ցոյց անուանեց կառավարութեան հասցէին։ Ճեմարանը հաւանօրէն վերաբացվելու է։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

27 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգական դատարանը դատապարտեց «Правда»-ի խմբագիր Լեբեդեվին եօթ օրով բանտարկութեան։

«Б. Вѣд.»-ի խմբագիր Րօզանօվը դատապարտվեց միեւնոյն դատարանից երկու շաբաթով կալանաւորման դիֆֆամացիայի համար։

Հրատարակվեց ժող. լուս. մինիստրի հրահանգը այն մասին, որ այսուհետեւ Մօսկվայի, Պետերբուրգի, Բեստուժեվի, Կիէվի, Կազանի կանանց բարձր դասընթացների ունկնդրուհիները իրաւունք են ձեռք բերում առանց ամեն անգամ մինիստրութեան թոյլատւութիւնը ստանալու քննութիւն տալու համալսարանի քննիչ մասնաժողովների մէջ։

Գրաւվեց «Правда»-ի № 70-ը։ Խմբագիր Ալէքսէեվը ենթարկվում է պատասխանատւութեան 129-րդ յօդուածով։ «Наша Заря» թերթի խմբագիրը ենթարկվեց 350 ր. տուգանքի։

Թագաւոր Կայսրին ներկայացաւ Բագուի քաղաքապետը։

ՉԸ ՀԱՍՑՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

27 մարտի

Սղնախից — Ազգաշօվին, Կարեազինից—Տանվօրին, Օրէլից—Աֆանասեւվին, Ջաջուրից—Լօրցեանցին, Մ. Ղարաքիլիսայից—Կուբալեանցին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շպարի մի քանի տեսակները ուղղակի փչացնում են երեսի գոյնը եւ կաշին՝ դարձնելով վերջինիս դեղնաբեկ եւ պատռուածքներով լի, միաժամանակ շատ վատ ազդեցութիւն թողնելով առողջութեան վրա։

Հետեւաբար, շպար գնելուց մի քանի կոպէկ խնայողութիւն անելը միանգամայն անտեղի է։

Հարկաւոր է գործադրել սոսկ միայն № 4711 ճարպային շպարը՝ ուշադրութիւն դարձնելով գնելու ժամանակ այն բանի վրա, որ տուփի ձեղ իսկական «№ 4711 ՃԱՐՊԱՅԻՆ ՇՊԱՐԸ», որը թէ միանգամայն անվնասակար է եւ թէ երեսին տալիս է թարմ երիտասարդութեան տեսք։ Արկղիկի գինը 30 կոպէկ է։

(M. 529879/529905) 2—2

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Սպերմին-Պելով օգտվող հիւանդներին աշխատում են խաբել մեծախօսում ռեկլամներով սերմային երկաթից պատրաստված հեղուկների մասին, ըստ որում այդ ռեկլամների մէջ անամօթաբար խեղաթիւրում են փաստերը եւ մատնացոյց են լինում եւրօպական գիտնականների անուան եւ աշխատութիւնների վրա, մինչդեռ այդ գիտնականները երբեք չեն տեսել այդ պրէպարատները։ Մենք մեր պարտքն ենք համարում նախազգուշացնել հիւանդներին այդ մահլամներից, որովհետեւ նրանք՝ չունենալով ոչ մի առնչութիւն Սպերմին-Պելի հետ՝ շատ անգամ պարունակում են իրանց մէջ հակառողջական նիւթեր։

Նեվրաստենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, իստէրիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային թօքսիկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (շաքարախտ, սրտի պնդացում, սրտի բաբախում, պէրեբօ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումի, ալկոհոլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից առաջացած թուլութեան, յոգնածութեան եւ այլ հիւանդութիւնների ժամանակ միայն Սպերմին-Պելի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետեւանքներին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհին յայտնի գիտնականների եւ բժիշկների վկայութիւնները։

Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել **ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻ** անուան վրա եւ մերժել բոլոր մահլամները եւ հեղուկները զանազան անուններով, որոնց անվտանգութեան մասին հրատարակված է առանձին բրօշիւր, որ ուղարկվում է ձրի՝ Սպերմինի մասին եղած նորագոյն գրականութեան հետ միասին։

ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻՆ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԵՂԱՎԱՃԱՌ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКIЙ ИНСТИТУТЪ
Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-ья
Поставщики Двора
ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
С.-ПЕТЕРБУРГЪ.

(П. 1467) 12—9

Կ. Հ. Բ. Ընկերութեան

շինութեան մէջ (Արսա-Արաղսկի հրապարակ, № 7) մարտի 29-ին, երեկոյեան ժամը 7-ին, նշանակված է մրցութիւն՝ ծախելու կամ կապալով տալու Ն. Տէր-Ղազարեանի կալուածքը, որ գտնվում է Հավլաբարում, Բօզովայա հրապար. վրա։ Պայմանագրերը կարելի է կարդալ Ընկ. դրասենեակում ամեն օր։ 244. 1—1

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ
ՄԻ ՀԱՅՈՒՀԻ

ցանկանում է ունենալ տնտեսուհու պաշտօն։ Հմուտ է նաեւ կարուձեւին։ Հասցէն՝ Саратовъ, до востребованія, А. М.

(օ.մ.) 237. 6—3

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
ԻՆԺԵՆԵՐ Ի. Ս. Պօնդօեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.։ Տելէֆօն № 10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ

ԵՐԿԱԹ—անկիւնի, կաթսայի, ռէֆինօյ, տանիքի սեւ եւ ցինկով պատած ԱՍՖԱԼՏ սրբագունեան, ԳՈՒԴՐՈՆ, կրակի դիմացող աղիւս եւ կաւ։ Շինութեան եւ փուչ ԱՂԻՒՍ, ԿՂՄԻՆՏՐ մարսէլեան տեսակի եւ այլ առարկ.։ Աղիւսի սեփակ. գործարան Թիֆլիսում։ Ամեն տեսակ շինարարական նիւթեղէնի համար տրված պատուէրները կատարվում են շուտափոյթ։

(ու.) 7. 30—14

Типографiя канцелярiи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный